¹⁰ St'u Kluchin, Rebecca M. (2009) *Fit to Be Tied: Sterilization and Reproductive Rights in America, 1950-1980, USA: Rutgers University Press*, էջ 17:

¹¹ St'u Gilbert, Sir Martin. *Churchill and Eugenics*. International Churchill Society: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://winstonchurchill.org/publications/finest-hour-extras/churchill-and-eugenics-1/>

¹² Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Stepan, Nancy L. (1996). *The Hour of Eugenics: Race, Gender, and Nation in Latin America*. Ithaca and London: Cornell University Press.

¹³ St'u Chung, Yuehsen Juliette (2014). Better Science and Better Race?: Social Darwinism and Chinese Eugenics. *Isis*. 105 (4), էջեր 799-800:

¹⁴ St'u Kuhar, Martin (2017). “From an Impure Source, All Is Impure”: The Rise and Fall of Andrija Stampar’s Public Health Eugenics in Yugoslavia. *Social History of Medicine*. 30 (1), էջեր 92-113:

¹⁵ St'u Hitler, Adolf. *Mein Kampf*. Translated in to English by James Murphy (1939), էջ 361: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://greatwar.nl/books/meinkampf/meinkampf.pdf>

¹⁶ St'u Law for the Prevention of Offspring with Hereditary Diseases (July 14, 1933). *German History in Documents and Images*. Volume 7. Nazi Germany, 1933-1945: Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <http://germanhistorydocs.ghi-dc.org/pdf/eng/English30.pdf>

¹⁷ St'u Mifiler-Hill, Benno (1992). Genetic Inequality and Social Injustice: A Lesson from History. In *BBV Foundation (Ed.) pp. 357-364. Human Genome Project: Ethics*. Madrid, Bilbao: Thyssen-Bornemisza Collection, էջ 360:

Եվգենիկայի վերաբերյալ վերոշարադրյալ ընկալումները հիմք հանդիսացան Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում իրականացված ցեղասպանության, ինչը հանգեցրեց նրան, որ պատերազմից հետո եվգենիկական շարժումն սկսեց անկում ապրել (թեև վիճահարույց օրենքները դեռ որոշ ժամանակ շարունակեցին ուժի մեջ մնալ Շվեդիայում և ԱՄՆ-ում):

Ժամանակակից գիտությունը, սակայն, նոր բացահայտումներ ունի բիոբժշկական միջոցներով իրականացվող բեղմնավորումների, գենետիկ թեստավորման, գենետիկ մոդիֆիկացիաների, կրոնավորման և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ, ուստի եվգենիկան կրկին արդի քննարկման թեմա է, կամ ավելի ճիշտ կլինի ասել՝ արդիականացել է «նոր» եվգենիկայի (եվգենիկայի վերաբերյալ «նոր» ընկալումների) ձևավորման հարցը: Այս համատեքստում եվգենիկայի վերաբերյալ մոտեցումները մասնագիտական գրականության մեջ քննարկումների ու բանավեճի առարկա են. որոշ աղբյուրներում եվգենիկան մեկնաբանվում է որպես վերարտադրողականությունն օգտագործելու միջոցով այնպիսի մարդկանց սաղմնավորմանն ուղղված քայլեր, որոնք օժտված են առաջընթացի համար անհրաժեշտ որակներով¹⁸: Այլ աղբյուրներում եվգենիկան մեկնաբանվում է որպես պրակտիկա, որի նպատակն է բարելավել մարդկային կյանքը՝ ծնվող կամ վերարտադրվող անձանց նկատմամբ ժառանգականության հիման վրա վերահսկողություն իրականացնելու միջոցով¹⁹: Եվգենիկան ընկալվում է նաև որպես սոցիալական շարժում, որի նպատակն է ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման միջոցով բարելավել «մարդ» տեսակը²⁰:

Եվգենիկայի վերաբերյալ «հին» և «նոր» ընկալումների միջև առկա տարբերություններից մեկն այն է, որ «նոր» եվգենիկայում բացակայում է կազմակերպված հարկադրանքը²¹: Բացի այդ, եվգենիկայի վերաբերյալ «նոր» ընկալումը զերծ է «հին» եվգենիկայում առկա՝ կոնկրետ գեների անընդունելիությունը դրանք կրող անձանց բարոյական արժեքների հետ նույնացնելու արատավոր պրակտիկայից²², ինչպես նաև այն ընկալումից, որ, օրինակ, մարդու բոլոր առանձնահատկությունները որոշվում են բացառապես գեներով²³:

Մասնագիտական գրականության մեջ լայնորեն քննադատվում է եվգենի-

¹⁸ St' u Anomaly, Jonathan (2018). Defending eugenics, From cryptic choice to conscious selection. *Monash Bioethics Review*. 35 (1-4), էջ 24:
¹⁹ St' u Selgelid, Michael J. (2014). Moderate eugenics and human enhancement. *Medicine, Health Care and Philosophy*. 17 (1), էջ 3:
²⁰ St' u Harding John R. Jr. (1991). Beyond Abortion: Human Genetics and the New Eugenics. *Pepperdine Law Review*. 18 (3), էջ 447:
²¹ St' u Romeo-Casabona, C. M. (1998). Health and Eugenics Practices: Looking Towards the Future. *European Journal of Health Law*. 5 (3), էջ 243:
²² St' u Powell, Russell (2015). In *Genes We Trust: Germline Engineering, Eugenics, and the Future of the Human Genome*. *Journal of Medicine and Philosophy*. 40(6), էջ 684:
²³ St' u Ekberg, Merryn (2007). The Old Eugenics and the New Genetics Compared. *Social History of Medicine*. 20 (3), էջ 590:

կայի վերաբերյալ «հին» մոտեցումը և ընդգծվում է, որ եվգենիկայի վերաբերյալ «նոր» մոտեցումը հիմնված է կամքի ազատության վրա: Դրա հետ մեկտեղ, սակայն, հեղինակները նշում են, որ եվգենիկայի վերաբերյալ «հին» մոտեցման որոշ տարրեր, օրինակ՝ բնակչության որակի բարելավման ձգտումը, ինչպես նաև խտրականության որոշ դրսևորումներ, շարունակում են գոյություն ունենալ եվգենիկայի վերաբերյալ «նոր» ընկալումներում:

Մենք համամիտ ենք այն հեղինակների հետ, որոնք գտնում են, որ եվգենիկայի վերաբերյալ «հին» ընկալման որոշ դրսևորումների առկայության կամ բացակայության վերաբերյալ քննարկումները որևէ կերպ օգտակար չեն գենետիկայի ոլորտում նոր տեխնոլոգիաների կիրառման արդյունքում ծագող էթիկական և իրավական խնդիրների լուծման համար²⁴, սակայն կարծում ենք՝ եվգենիկայի վերաբերյալ «հին» ընկալման որոշ դրսևորումների շեշտադրումն օգտակար է վիճահարույց տեխնոլոգիաների վրա հատուկ ուշադրություն հրավիրելու տեսանկյունից և կարող է հակակշռող դերակատարում ունենալ նոր տեխնոլոգիաների կիրառման նկատմամբ չկշռադատված ազատական մոտեցումները զսպելու համար:

Ինչպես նշվեց վերևում, «նոր» եվգենիկայի վերաբերյալ ազատական մոտեցումների հիմնական փաստարկները խարսխված են կամքի ազատության և անձնական անձեռնմխելիության երկտեսերի վրա²⁵: Ի պաշտպանություն ազատական մոտեցման՝ մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ գենետիկ մոդիֆիկացիաներն անհրաժեշտ են «մարդ» տեսակի պահպանության համար, քանի որ ժամանակակից բժշկական միջամտությունները մարդու վրա էվոլյուցիոն ազդեցություն են ունենում, իսկ ավելի կոնկրետ՝ հանգեցնում են «սպեվոդգենիկացիայի», ինչը ենթադրում է ԴՆԹ բազային գույգի մուտացիաների կուտակում կողմնորոգ գեոմում, ինչի արդյունքում այն կարող է դառնալ ոչ ֆունկցիոնալ: Օրինակ՝ սննդարտադրության ժամանակակից տեխնոլոգիաների և տարբեր արհեստական սննդային հավելումների պատճառով թուլացել են պոտենցիալ թունավոր սննդի հայտնաբերման համար պատասխանատու համային ռեցեպտորների գենային կոդերը, կամ տեսալսողական բժշկական սարքավորումների զարգացմանը և դրանց կիրառմանը զուգընթաց՝ ավելանում են դրանք կիրառող անձինք, ինչը կարող է հանգեցնել տեսալսողական օրգանների սրության համար պատասխանատու գենային կոդերի դեգրադացիային և այլն²⁶:

Անդրադառնալով եվգենիկայի վերաբերյալ տարբեր ընկալումներին, «հին» և «նոր» եվգենիկաների տարբերություններին՝ հարկ է նշել, որ եվգենիկայի վե-

²⁴ St' u Cavaliere, Giulia (2018). Looking into the shadow: the eugenics argument in debates on reproductive technologies and practices. *Monash Bioethics Review*. 36 (1-4), էջեր 17-18:

²⁵ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Robertson, John A. (1994). *Children of Choice: Freedom and the New Reproductive Technologies*. Princeton. New Jersey: Princeton University Press:

²⁶ St' u Powell, Russell (2015). In *Genes We Trust: Germline Engineering, Eugenics, and the Future of the Human Genome*. *Journal of Medicine and Philosophy*. 40(6), էջեր 676-677:

րաբերյալ «նոր» ընկալումների համատեքստում հստակեցված չէ, թե ինչն է դիտարկվում որպես «ավելի լավ», ինչն է «մարդկության առաջընթացի համար անհրաժեշտ», կամ որն է այն արարքը, որը հակասում է պաշտպանության ենթակա հիմնարար արժեքներին: Օրինակ. կան արարքներ, որոնք ներկայումս ընդունելի են համարվում և տեղավորվում են եվգենիկայի վերաբերյալ «նոր» ընկալումների մեջ, օրինակ՝ պտղի գենետիկ թեստավորումից հետո հղի կինը տեղեկացվում է, որ պտղի մոտ առկա է գենետիկ ծանր հիվանդություն և նշվում է, որ նման դեպքերում սովորաբար ցուցվում է արքուն: Մեկ այլ օրինակ՝ բիոբժշկական միջոցներով իրականացվող բեղմնավորումների ժամանակ, որպես կանոն, մի քանի էմբրիոններ են ստեղծվում, և կնոջ արգանդում տեղադրվում են լավագույն որակներով օժտված էմբրիոնները (մնացած էմբրիոնները, կամ սառեցվում են, կամ, ոչնչացվում), որպեսզի միջամտությունն ավարտվի լավագույն արդյունքներով, և անհրաժեշտություն չառաջանա կրկնելու բիոբժշկական միջոցներով իրականացվող բեղմնավորումը²⁷: Ուստի, մասնագիտական գրականության մեջ նշվում է, որ եվգենիկայի վերաբերյալ «նոր» ընկալումների համատեքստում կարևոր է տարանջատել «անձի գենետիկ ինքնության բարելավումը» և «հիվանդությունների ու անոմալիաների վերացումը» այն դեպքերում, երբ դրա հնարավորությունն առկա է²⁸: Իհարկե, համաձայն ենք այն տեսաբանների հետ, ովքեր գտնում են, որ վերոշարադրյալ ձևակերպման մեջ ամրագրված առաջին չափորոշիչը խնդրահարույց է, և բիոբժշկական միջոցներով իրականացվող բեղմնավորումների ժամանակ էմբրիոնների՝ մի շարք չափանիշներով իրականացվող թեստավորումների (հասակ, ինտելեկտ և այլն) շրջանակը գնալով ընդլայնվում է, ինչն անխուսափելիորեն հանգեցնելու է նրան, որ վերոնշյալ թեստավորումները որակվեն որպես ««մարդ» տեսակի բարելավում», «ոչ թերապևտիկ նպատակներով իրականացվող բարելավում» կամ «եվգենիկական ստեղծարարություն»²⁹: Երկրորդ չափորոշիչի հետ կապված, սակայն, կարծում ենք, որ այն անհրաժեշտ է, քանի որ եվգենիկայի վերաբերյալ «նոր» ընկալումների զարգացմանը խոչընդոտող տոտալ արգելքներն ի գործ չեն արդյունավետ կերպով հակակշռել զարգացող ժամանակակից տեխնոլոգիաները և, ընդհակառակը, նպաստում են ոլորտում «սև շուկաների» ու «սև խոռոչների» առաջացմանը. մարդն ու գիտությունը ձգտելու են առաջընթացի, ձևավորելու են նոր տեխնոլոգիաների կիրառման պահանջարկ՝ դրանով նպաստելով «սև շուկայի» զարգացմանը՝ բխող բոլոր, այդ թվում՝ հանցավոր հետևանքներով: Ուստի կար-

²⁷ St'ou Selgelid, Michael J. (2014). Moderate eugenics and human enhancement. *Medicine, Health Care and Philosophy*. 17 (1), էջեր 6-7:

²⁸ St'ou Gaille, Marie and Viot, Ge'aldine (2013). Prenatal diagnosis as a tool and support for eugenics: myth or reality in contemporary French society? *Medicine, Health Care and Philosophy* Volume 16 (1), էջ 85:

²⁹ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Persson Ingmar, Savulescu Julian (2019). The Duty to be Morally Enhanced. *Topoi*. 38(1), էջեր 7-14:

ծում ենք՝ բիոբժշկական տեխնոլոգիաների զարգացման արդի ժամանակաշրջանում ներպետական և միջազգային մակարդակներում պետք է հետևողականորեն ուրվագծվեն «թերապևտիկ» և «ոչ թերապևտիկ» նպատակներով իրականացվող միջամտությունների բարոյաէթիկական և իրավական, այդ թվում՝ քրեաիրավական սահմանները:

Եվգենիկայի վերաբերյալ ժամանակակից ընկալումներն ամրագրող միջազգային փաստաթղթերը

Եվգենիկայի հարցերի վերաբերյալ միջազգային փաստաթղթերի մասին խոսելիս հարկ է նշել «Մարդու գենոմի և մարդու իրավունքների մասին» համընդհանուր հռչակագիրը (ընդունված 1997 թվականին), «Բիոէթիկայի և մարդու իրավունքների մասին» համընդհանուր հռչակագիրը (ընդունված 2005 թվականին), «Մարդու գենետիկ տվյալների մասին» միջազգային հռչակագիրը (ընդունված 2003 թվականին). վերջինս ամրագրում է գենետիկ թեստի հասկացությունը³⁰: Այս համատեքստում կարևոր է ընդգծել նաև, որ ՄԱԿ-ի շրջանակներում չի հաջողվել ընդունել մարդու վերարտադրողական կլոնավորումն իրավաբանորեն արգելող փաստաթուղթ, դրա փոխարեն, սակայն, 2005 թվականին ընդունվել է «Մարդու կլոնավորման մասին» հռչակագիրը³¹, որը, բացի այն, որ իրավաբանորեն պարտադիր բնույթ չունի, նաև հստակ չի արգելում ո՛չ վերարտադրողական, ո՛չ թերապևտիկ կլոնավորումը³²: Այլ խոսքով՝ վերոնշյալ փաստաթղթերը գործում են փափուկ իրավունքի տիրույթում. սահմանում են ընդհանուր սկզբունքներ, որոնք, սակայն, ուղեկցվում են ենթադրությամբ այն մասին, որ հանդիսանում են այլ, ավելի կոնկրետ՝ սահմանափակող կամ արգելող կանոնների սահմանման հիմք: Հետևաբար, բաց է մնում այն հարցը, թե արդյոք պետությունները համաշխարհային (ունիվերսալ) մակարդակում երբևէ պատրաստ կլինե՞ն ամրագրել առավել կոնկրետ՝ սահմանափակող կամ արգելող կանոններ: Այս առումով որոշակի առաջընթաց առկա է Եվրոպայում: Եվգենիկական պրակտիկաների արգելքն առաջին անգամ ամրագրվել է «Հիմնարար

³⁰ Տե՛ս UNESCO (2005). Universal Declaration on Bioethics and Human Right; UNESCO (1997). Universal Declaration on the Human Genome and Human Rights; UNESCO (2003). International Declaration on Human Genetic Data.

³¹ Տե՛ս United Nations (2005). Declaration on Human Cloning. A/RES/59/280.

³² Երկրները, որոնք կողմ են կլոնավորման բացարձակ արգելքին, սկզբունքորեն կարող են մեկնաբանել Հռչակագրի տեքստն այնպես, որ ստացվի, թե արգելվում են կլոնավորման բոլոր ձևերը, մինչդեռ մյուս կողմից, այն երկրները, որոնք կողմ են միայն վերարտադրողական կլոնավորման արգելքին, կարող են մեկնաբանել Հռչակագրի տեքստն այնպես, որ ստացվի, թե արգելված են միայն այն կլոնավորման գործընթացները, որոնք հակասում են արժանապատվությանը կամ հանդիսանում են վերարտադրողական կլոնավորում. Հռչակագիրը չի սահմանում ո՛չ «կլոնավորում», ո՛չ «մարդ արարած» հասկացությունները: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Clados, Mirjam Sophia (2012). Bioethics in International Law: An Analysis of the Intertwining of Bioethical and Legal Discourses. Inaugural-Dissertation zur Erlangung des Doktorgrades der Philosophie an der Ludwig-Maximilians-Universität. München, էջ 91:

իրավունքների մասին» ԵՄ խարտիայում, մասնավորապես, դրա 3-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆում, որի համաձայն՝ բժշկության և կենսաբանության ոլորտներում պետք է պահպանվեն եվգենիկական այն պրակտիկաների կիրառման արգելքները, որոնք ուղղված են, մասնավորապես, մարդկանց սելեկցիային: Նշված կարգավորումն առաջին հայացքից անորոշ է թվում, հատկապես, եթե արգելքի միակ չափանիշը մարդկանց սելեկցիան է, բացի այդ, ձևակերպման մեջ օգտագործվում է «մասնավորապես» բառը, ինչից բխում է, որ կան եվգենիկական պրակտիկաներ, որոնք ուղղված չեն մարդկանց սելեկցիային: Ավելին, պարզ չէ, թե ինչ է ենթադրվում «եվգենիկական պրակտիկաներ» ձևակերպման տակ, քանի որ բիոբժշկական միջոցներով իրականացվող բեղմնավորման ժամանակ էմբրիոնների և ֆետուսների ընտրությունը ևս կարող է դիտարկվել որպես եվգենիկական պրակտիկա:

Եվգենիկական պրակտիկաների՝ ԵՄ խարտիայում ամրագրված արգելքը բխում է մարդկության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ Հռոմի միջազգային քրեական դատարանի ստատուտի 7-րդ հոդվածի 1-ին պարագրաֆի (g) ենթակետի ձևակերպումից: ԵՄ խարտիայի հիմնադիրները վերոնշյալ արգելքն ամրագրելիս հիմնվել են եվգենիկայի վերաբերյալ «հին» մտտեցումների վրա, քանի որ եվգենիկական պրակտիկաների և հատկապես մարդկանց սելեկցիային ուղղված պրակտիկաների արգելքը պայմանավորված է նրանով, որ «հնարավոր են իրավիճակներ, երբ կազմակերպվեն և իրականացվեն սելեկցիոն ծրագրեր, այդ թվում՝ ստերիլիզացիա, հարկադիր հղիություն, հարկադիր էթնիկ ամուսնություններ, որոնք բոլորը, Հռոմի միջազգային քրեական դատարանի ստատուտի համաձայն, հանդիսանում են միջազգային հանցագործություններ³³: Հետևաբար, ԵՄ խարտիայում ամրագրված եվգենիկական պրակտիկաների արգելքը ենթադրում է, որ պետության մակարդակում պետք է ներդրվեն արգելքի իրականացման համար անհրաժեշտ հիմքեր, կիրառվեն հարկադրանքի միջոցներ:

Եվգենիկական պրակտիկաները ժամանակակից գենետիկայի լույսի ներքո այլ իմաստ ունեն, որը տարբերվում է պետությունների կողմից նախկինում իրականացված հարկադրական ծրագրերից: Ի լրումն, հարկ է նշել նաև, որ ԵՄ խարտիայի վերոնշյալ դրույթը կոչված է բիոբժշկության ոլորտում պաշտպանելու մարդու արժանապատվությունը, իսկ ինչ վերաբերում է եվգենիկայի վերաբերյալ «հին» ընկալումներին (սելեկցիոն հարկադիր ծրագրեր և այլն), ապա դրանք պետք է իրավական գնահատականի արժանանան խոշտանգումների արգելքի համատեքստում³⁴:

Եվգենիկական պրակտիկաների արգելքն ուղղակիորեն երաշխավորված չէ

³³ St' u European Union (2007). Explanations Relating to the Charter of Fundamental Rights. Official Journal of the European Union. 303/17. 14.12.2007.

³⁴ St' u Đukanović, Andela (2015). Evropski standardi u oblasti biomedicine-pravo na integritet ličnosti. doktorska disertacija. Beograd, էջեր 295-296:

նաև «Կենսաբանության և բժշկության նվաճումների կիրառման առնչությամբ մարդու իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին, մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին» եվրոպական կոնվենցիայով (այսուհետ նաև՝ «Բիոբժշկության մասին» կոնվենցիա)³⁵: Եվգենիկայի վերաբերյալ «նոր» ընկալումներն առաջին հերթին կապված են վերոնշյալ կոնվենցիայի 13-րդ հոդվածում ամրագրված արգելքի հետ, որի համաձայն՝ «Մարդու գենոմի փոփոխությանն ուղղված միջամտություն կարող է իրականացվել միայն կանխարգելման, ախտորոշման կամ թերապևտիկ նպատակներով և միայն այն դեպքում, եթե այն նպատակ չունի որևէ փոփոխության ենթարկել տվյալ մարդու ժառանգների գենոմը»: Այս կարգավորման նպատակն է բացառել «որոշակի հատկանիշներով և որակներով օժտված անձանց կամ անձանց խմբերի ստեղծման նպատակով իրականացվող մարդկային գենոմի դիտավորյալ մոդիֆիկացիաները»³⁶: Մյուս կողմից՝ «Մարդու գենոմի և մարդու իրավունքների մասին» համընդհանուր հռչակագրի 5-րդ հոդվածը հնարավորություն է վերապահում իրականացնելու այնպիսի հետազոտություններ, միջամտություններ կամ ախտորոշումներ, որոնք ազդում են անձի գենոմի վրա՝ պայմանով, որ նախքան վերոնշյալ հետազոտությունները, միջամտությունները կամ ախտորոշումները, իրականացվել է ռիսկերի և ակնկալվող դրական արդյունքների մանրամասն գնահատում: Ժառանգական գենետիկ մոդիֆիկացիաները դեռևս փորձարկվում են կենդանիների վրա, և գիտությունը պատրաստ չէ մարդկանց նկատմամբ գենետիկ ինժեներիայի տեխնոլոգիաների լայնածավալ կիրառման³⁷: Դրա հետ մեկտեղ, սակայն, CRISPR տեխնոլոգիաների միջոցով մարդկանց նկատմամբ գենետիկ մոդիֆիկացիաներ իրականացնելու վերաբերյալ առաջարկները մեծ աղմուկ են բարձացրել գիտական հանրության շրջանում: Այն բանից հետո, երբ չինացի գիտնականները հայտարարեցին, որ հաջողությամբ նման փոփոխություն են իրականացրել զույգ էմբրիոնների նկատմամբ, որպեսզի վերջիններս ՄԻԱՎ-ի նկատմամբ իմունիտետ ձեռք բերեն, գիտնականներն սկսեցին պահանջել զուրպա մորատորիում մարդու գենների «խմբագրման» նկատմամբ, քանի որ նման «խմբագրումները» կարող են փոխանցվել հաջորդ սերունդներին³⁸:

³⁵ Կոնվենցիան Հայաստանի կողմից չի վավերացվել, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/164>

³⁶ St'eu Council of Europe (1997). Explanatory Report to the Convention for the Protection of Human Rights and Dignity of the Human Being regarding the Application of Biology and Medicine: Convention on Human Rights and Biomedicine – Explanatory Report to the Convention on Human Rights and Biomedicine. DIR/JUR (97) 5. Strasbourg. պարագրաֆ 89:

³⁷ St'eu Powell, Russell (2015). In Genes We Trust: Germline Engineering, Eugenics, and the Future of the Human Genome. Journal of Medicine and Philosophy. 40(6), էջ 670:

³⁸ St'eu Kuchler, Hannah (13 March 2019). Scientists plead for moratorium after designer babies outcry, Developers of Crispr technique for genome editing also call for halt to experiments on hereditary genes. Financial Times. Հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.ft.com/content/468a1f16-45c9-11e9-a965-23d669740bfb>

Միտոքոնդրիալ հիվանդությունների դեպքում միտոքոնդրիալ տեղափոխումների տեխնիկայի կիրառումը ևս վիճելի է, քանի որ ենթադրում է *in vitro* բեղմնավորումներ, որոնց դեպքում սաղմի միտոքոնդրիալ ԴՆԹ-ն վերցվում է երրորդ անձից: Գիտնականների շրջանում միասնական մոտեցում չկա այն հարցի վերաբերյալ, թե արդյո՞ք այս տեխնիկան սաղմի գենի մոդիֆիկացիա է. որոշ գիտնականներ առաջարկում են այն դիտարկել որպես «որոշակի պայմաններում ժառանգվող գենային մոդիֆիկացիա»³⁹: Ներկայումս միայն Մեծ Բրիտանիայում է ուղղակիորեն թույլատրվում միտոքոնդրիալ տեղափոխման թերապիան, թեև այն իրականացվում է նաև Մեխիկոյում և Ուկրաինայում⁴⁰: Հարկ է նշել նաև, որ այս տեխնիկայի կիրառմամբ երեխա է ծնվել Հունաստանում՝ չնայած այն հանգամանքին, որ Հունաստանը վավերացրել է «Բիոբժշկության մասին» կոնվենցիան⁴¹:

«Բիոբժշկության մասին» կոնվենցիայից բացի, գենետիկ թեստավորման հետ կապված հարցերը միջազգային մակարդակում կարգավորում են «Մարդու գենետիկ տվյալների մասին» միջազգային հռչակագրով և «Առողջական նպատակներով գենետիկ թեստավորման մասին» «Բիոբժշկության մասին» կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությամբ: Նշված Արձանագրությունը վավերացվել է ԵԽ անդամ վեց պետությունների կողմից⁴²: Բացի այդ, հարկ է ընդգծել, որ Արձանագրությունը վերաբերելի չէ հետազոտական նպատակներով մարդու էմբրիոնների կամ ֆետուսների նկատմամբ իրականացվող գենետիկ թեստավորմանը⁴³, ինչը նշանակում է, որ այն չի կիրառվում նաև նախաիմպլանտացիոն կամ նախածննդյան գենետիկ ախտորոշումների նկատմամբ⁴⁴:

Եվգենիկայի ձևերից մեկի՝ կլոնավորման մասին խոսելիս անհրաժեշտ է նշել «Մարդու կլոնավորման արգելքի մասին» «Բիոբժշկության մասին» կոնվենցի-

³⁹ St'u Newson, Ainsley J. and Wrigley, Anthony (2017). Is Mitochondrial Donation Germ-Line Gene Therapy? Classifications and Ethical Implications. *Bioethics*. 31(1), էջեր 66-67:

⁴⁰ St'u Ong, Sandy (June 2018). Singapore could become the second country to legalize mitochondrial replacement therapy, *Science*, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.sciencemag.org/news/2018/06/singapore-could-become-second-country-legalize-mitochondrial-replacement-therapy> <https://www.sciencemag.org/news/2018/06/singapore-could-become-second-country-legalize-mitochondrial-replacement-therapy>

⁴¹ St'u Gallagher, James (11 April 2019). “Three-person” baby boy born in Greece. *BBC News*. հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.bbc.com/news/health-47889387>

⁴² St'u Council of Europe (2019). Chart of signatures and ratifications of Treaty 203 Additional Protocol to the Convention on Human Rights and Biomedicine concerning Genetic Testing for Health Purposes, Status as of 14/06/2019. Հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/203/signatures?p_auth=y4UdE2G5

⁴³ St'u Council of Europe (2008). Additional Protocol to the Convention on Human Rights and Biomedicine, concerning Genetic Testing for Health Purposes. *European Treaty Series*. Strasbourg, հոդված 2:

⁴⁴ Հարկ է ընդգծել, որ Մարդու գենետիկ տվյալների մասին միջազգային հռչակագիրը ավելի լայն կիրառություն ունի, քան «Առողջական նպատակներով գենետիկ թեստավորման մասին» «Բիոբժշկության մասին» կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը, երբ խոսքը վերաբերում է էմբրիոնների և ֆետուսների գենետիկ թեստավորմանը, տե՛ս Հռչակագրի 1-ին հոդվածը:

այի լրացուցիչ արձանագրության վերաբերյալ, որն արգելում է ցանկացած միջամտություն, որն ուղղված է կենդանի կամ մահացած մեկ այլ մարդու հետ գենետիկորեն նույնական մարդկանց ստեղծմանը: Մարդու արժանապատվության պաշտպանության համատեքստում՝ ԵՄ խարտիայի 3-րդ հոդվածի 2-րդ պարագրաֆում արգելվում է մարդու վերարտադրողական կլոնավորումը:

Եվգենիկայի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ներպետական կարգավորումները

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ «Մարդու վերարտադրողականության հետ կապված իրավունքները սահմանվում են «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքով»:

«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքում «եվգենիկա», «սելեկցիա (լավասերում)» եզրույթները չեն կիրառվում, դրա փոխարեն օրենքի 1-ին հոդվածում ամրագրված է, որ այն կարգավորում է մարդու վերարտադրողական առողջության պահպանման, վերարտադրողական իրավունքի ապահովման, վերարտադրողականության ոլորտում տեխնոլոգիաների կիրառման կարգի ու պայմանների, ինչպես նաև դրանց հետ կապված այլ հարաբերություններ: Բացի այդ, ուղղակիորեն չկիրառելով «եվգենիկա» եզրույթը՝ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքը հիմնված է եվգենիկայի վերաբերյալ «նոր» մոտեցումների վրա, որի առանցքը կամքի ազատությունն է: Այդ մասին է վկայում, օրինակ, օրենքի 4-րդ հոդվածը («Վերարտադրողականության հետ կապված մարդու իրավունքները»), 9-րդ հոդվածը («Կամավոր բժշկական ամլացումը»), 10-րդ հոդվածը («Հղիության արհեստական ընդհատումը (աբորտը)») և այլն: Հետևաբար, կարծում ենք՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի՝ մարդու նկատմամբ եվգենիկական փորձերի համար քրեական պատասխանատվություն նախատեսող հոդվածը մեկնաբանելիս հարկ է առաջնորդվել «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի եզրութաբանությամբ:

Ինչպես նշվեց վերևում, գործող և նախկին քրեական օրենսգրքերը որպես եվգենիկական փորձ են որակում մարդու լավասերմանը (սելեկցիային) ուղղված ցանկացած գործողություն: Մեջբերված կարգավորումը համընկնում է ԵՄ խարտիայում և վերևում վերլուծված մի շարք այլ միջազգային փաստաթղթերում ամրագրված կարգավորումների հետս, սակայն, ՀՀ-ում թույլատրված վերարտադրողական տեխնոլոգիաների շրջանակի պարագայում կարծում ենք՝ կարգավորումը հստակեցման կարիք ունի: Մասնավորապես, «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ «Հայաստանի Հանրա-

պետության Սահմանադրությանը և օրենքներին, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ յուրաքանչյուր ոք ունի կենսական անհրաժեշտության սեռական և վերարտադրողական հետևյալ իրավունքները. (...) օգտվել վերարտադրողականության նոր տեխնոլոգիաները, ներառյալ՝ պտղաբերության կարգավորման ասպիտով և արդյունավետ միջոցները և (կամ) մեթոդները, ինչպես նաև անպտղության բուժման համար կիրառվող վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաները»:

Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը ամրագրում է վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կոնկրետ տեսակներ և ընդգծում, որ դրանք կիրառվում են կառավարման լիազոր մարմնի հաստատած բժշկասոցիալական ցուցումների հիման վրա⁴⁵, իսկ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակներն ու բժշկական գործելակերպը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը (Օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասեր):

«Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակներն ու բժշկական գործելակերպը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2013 թվականի մարտի 7-ի թիվ 214-Ն որոշման 37-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մինչև սաղմի (սաղմերի) տեղափոխումն արգանդի խոռոչ, ըստ բժշկական ցուցումների իրականացվում է **նախաինյան տասցին բժշկագենետիկ հետազոտություն և ախտորոշում** (ընդգծումը մերն է՝ Ա.Վ.): Որոշման 38-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հղիության արդյունավետ ելքերի ապահովման նպատակով թույլատրելի է արգանդի խոռոչում **3-ից ոչ ավելի** սաղմի/պտղի տեղադրումը՝ **քաղաքությանը այն դեպքերի, երբ ինյան տասցիայի հավանականությունը գնահատվել է ցածր** (ընդգծումը մերն է՝ Ա.Վ.): Որոշման 51-րդ կետի համաձայն՝ բազմապտուղ (3 և ավելի) հղիության դեպքում հղիի դիմումի և իրազեկված գրավոր համաձայնության հիման վրա **կատարվում է զարգացող սաղմերի/պտուղների կրնատում (ռեդուկցիա) վիրահատական միջամտության միջոցով** (ընդգծումը մերն է՝ Ա.Վ.)՝ կնոջ կողմից նշված քանակին համապատասխան, սակայն ոչ ավելի քան 3 սաղմ/պտուղ:

Մեջբերված կարգավորումների տառացի մեկնաբանությունից հետևում է,

⁴⁵ Տե՛ս «Անպտղության պատճառագիտության ախտորոշման, ինչպես նաև վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների շրջանակներում կիրառվելիք մեթոդի որոշման նպատակով իրականացվող համալիր հետազոտությունների ցանկը, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով քաղաքացու կողմից ներկայացվող դիմումի ձևը հաստատելու և պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների (արհեստական սերմնավորման և բեղմնավորման) կիրառման բժշկական ցուցումների ցանկը սահմանելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի հուլիսի 3-ի թիվ 39-Ն հրամանը:

որ վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման դեպքում մարդու սաղմի նախախմպլանտացիոն բժշկագենետիկ հետազոտության և ախտորոշման հիման վրա իրականացվում է սելեկցիոն գործընթաց, մասնավորապես՝ ընտրվում և արգանդում տեղադրվում են 3-ից ոչ ավելի սաղմ, բազմապտուղ հղիության դեպքում կատարվում է սաղմերի/պտուղների կրճատում: Ճիշտ է, «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման դեպքում ապագա երեխայի սեռի պլանավորման արգելք՝ բացառությամբ այն դեպքերի, երբ առկա է սեռի հետ կապված հիվանդության ժառանգման հավանականություն⁴⁶:

Վերոշարադրյալի հիման վրա, ինչպես նաև հաշվի առնելով եվգենիկայի վերաբերյալ նոր ընկալումների առանցքային ելակետերը, որոնք ներկայացված են սույն հոդվածում՝ կարծում ենք՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքում անհրաժեշտ է հստակեցնել «թերապևտիկ» և «ոչ թերապևտիկ» նպատակներով իրականացվող սելեկտիվ միջամտությունների քրեականացման սահմանները: Այդ նպատակով *առաջարկում ենք ՀՀ գործող քրեական օրենսգրքի 186-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Մարդու վերարտադրողական կրոնավորումը՝ մասհասցած կամ կենդանի մարդու՝ արհեստական ճանապարհով գենետիկորեն նմանատիպը ստեղծելուն ուղղված ցանկացած գործողություն կատարելը կամ եվգենիկական փորձերը՝ մարդու լավասերմանը (սելեկցիային) ուղղված՝ մարդու կամ մարդկային սաղմի նկատմամբ ոչ թերապևտիկ նպատակներով ցանկացած գործողություն կատարելը՝ (...):»:*

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. «Անպտղության պատճառագիտության ախտորոշման, ինչպես նաև վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների շրջանակներում կիրառվելիք մեթոդի որոշման նպատակով իրականացվող համալիր հետազոտությունների ցանկը, վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակով քաղաքացու կողմից ներկայացվող դիմումի ձևը հաստատելու և պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների (արհեստական սե-

⁴⁶ Արգելքը համահունչ է «Բիոբժշկության մասին» կոնվենցիայի 14-րդ հոդվածին, որի համաձայն՝ «Արգելվում է օգտագործել վերարտադրողական օժանդակ բժշկական տեխնոլոգիաները երեխայի ապագա սեռն ընտրելու նպատակով, բացառությամբ սեռով պայմանավորված ժառանգական ծանր հիվանդությունից խուսափելու դեպքերի»:

րմնավորման և բեղմնավորման) կիրառման բժշկական ցուցումների ցանկը սահմանելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2015 թվականի հուլիսի 3-ի թիվ 39-Ն հրաման:

The RA Minister of Health Order No. 39-N, dated 3 July 2015, “The list of complex research carried out for the purpose of diagnosis of the etiology of infertility, as well as the determination of the method to be used within the framework of assisted reproductive technologies, to approve the application form submitted by a citizen in order to receive medical care and service guaranteed by the state for free or on preferential terms with the use of assisted reproductive technologies and on defining the list of medical indications for the use of assisted reproductive technologies (artificial insemination and fertilization) guaranteed by the state for free or under preferential conditions.”

2. Council of Europe (2019). Chart of signatures and ratifications of Treaty 203 Additional Protocol to the Convention on Human Rights and Biomedicine concerning Genetic Testing for Health Purposes, Status as of 14/06/2019. https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/203/signatures?p_auth=y4UdE2G5
3. UNESCO (2005). Universal Declaration on Bioethics and Human Right; UNESCO (1997). Universal Declaration on the Human Genome and Human Rights; UNESCO (2003). International Declaration on Human Genetic Data.
4. United Nations (2005). Declaration on Human Cloning. A/RES/59/280.
5. Law for the Prevention of Offspring with Hereditary Diseases (July 14, 1933). German History in Documents and Images. Volume 7. Nazi Germany, 1933-1945: <http://germanhistorydocs.ghi-dc.org/pdf/eng/English30.pdf>
6. Anomaly, Jonathan (2018). Defending eugenics, From cryptic choice to conscious selection. *Monash Bioethics Review*. 35 (1-4).
7. Council of Europe (1997). Explanatory Report to the Convention for the Protection of Human Rights and Dignity of the Human Being regarding the Application of Biology and Medicine: Convention on Human Rights and Biomedicine – Explanatory Report to the Convention on Human Rights and Biomedicine. DIR/JUR (97) 5. Strasbourg.
8. Council of Europe (2008). Additional Protocol to the Convention on Human Rights and Biomedicine, concerning Genetic Testing for Health Purposes. European Treaty Series. Strasbourg.
9. Clados, Mirjam Sophia (2012). Bioethics in International Law: An Analysis of the Intertwining of Bioethical and Legal Discourses. Inaugural-Dissertation zur Erlangung des Doktorgrades der Philosophie an der Ludwig-Maximilians-Universität. München.
10. Chung, Yuehtsen Juliette (2014). Better Science and Better Race?: Social Darwin-

- ism and Chinese Eugenics. *Isis*. 105 (4).
11. Cavaliere, Giulia (2018). Looking into the shadow: the eugenics argument in debates on reproductive technologies and practices. *Monash Bioethics Review*. 36 (1-4).
 12. Đukanović, Anđela (2015). European standards in the field of biomedicine - the right to personal integrity. doctoral dissertation. Belgrade.
 13. Đukanović, Anđela (2015). Evropski standardi u oblasti biomedicine-pravo na integritet ličnosti. doktorska disertacija. Beograd.
 14. European Union (2007). Explanations Relating to the Charter of Fundamental Rights. Official Journal of the European Union. 303/17. 14.12.2007.
 15. Ekberg, Merryn (2007). The Old Eugenics and the New Genetics Compared. *Social History of Medicine*. 20 (3).
 16. Gallagher, James (11 April 2019). "Three-person" baby boy born in Greece. *BBC News*. <https://www.bbc.com/news/health-47889387>
 17. Gilbert, Sir Martin. Churchill and Eugenics. International Churchill Society: <https://winstonchurchill.org/publications/finest-hour-extras/churchill-and-eugenics-1/>
 18. Gaille, Marie and Viot, Ge'raldine (2013). Prenatal diagnosis as a tool and support for eugenics: myth or reality in contemporary French society? *Medicine, Health Care and Philosophy* Volume 16 (1).
 19. Hitler, Adolf. *Mein Kampf*. Translated in to English by James Murphy (1939). <https://greatwar.nl/books/meinkampf/meinkampf.pdf>
 20. Harding John R. Jr. (1991). Beyond Abortion: Human Genetics and the New Eugenics. *Pepperdine Law Review*. 18 (3).
 21. Hyatt, Stephanie (1998). A Shared History of Shame: Sweden's Four-Decade Policy of Forced Sterilization and the Eugenics Movement in the United States. *Indiana International & Comparative Law Review*. 8(2).
 22. Kuhar, Martin (2017). "From an Impure Source, All Is Impure": The Rise and Fall of Andrija Stampar's Public Health Eugenics in Yugoslavia. *Social History of Medicine*. 30 (1).
 23. Kluchin, Rebecca M. (2009) *Fit to Be Tied: Sterilization and Reproductive Rights in America, 1950-1980*, USA: Rutgers University Press.
 24. Kuchler, Hannah (13 March 2019). Scientists plead for moratorium after designer babies outcry, Developers of Crispr technique for genome editing also call for halt to experiments on hereditary genes. *Financial Times*. <https://www.ft.com/content/468a1f16-45c9-11e9-a965-23d669740bfb>
 25. Miffler-Hill, Benno (1992). Genetic Inequality and Social Injustice: A Lesson from History. In *BBV Foundation (Ed.) pp. 357-364. Human Genome Project: Ethics*. Madrid, Bilbao: Thyssen-Bornemisza Collection.

26. Newson, Ainsley J. and Wrigley, Anthony (2017). Is Mitochondrial Donation Germ-Line Gene Therapy? Classifications and Ethical Implications. *Bioethics*. 31(1).
27. Ong, Sandy (June 2018). Singapore could become the second country to legalize mitochondrial replacement therapy, *Science*. <https://www.sciencemag.org/news/2018/06/singapore-could-become-second-country-legalize-mitochondrial-replacement-therapy>
28. Persson Ingmar, Savulescu Julian (2019). The Duty to be Morally Enhanced. *Topoi*. 38(1).
29. Powell, Russell (2015). In Genes We Trust: Germline Engineering, Eugenics, and the Future of the Human Genome. *Journal of Medicine and Philosophy*. 40(6).
30. Romeo-Casabona, C. M. (1998). Health and Eugenics Practices: Looking Towards the Future. *European Journal of Health Law*. 5 (3).
31. Report of the Committee to Study and to Report on the Best Practical Means of Cutting off the Defective Germ-Plasm in the American Population I. The scope of the committee's work, by Harry H. Laughlin, Secretary of the Committee (1914). New York.
32. Robertson, John A. (1994). *Children of Choice: Freedom and the New Reproductive Technologies*. Princeton. New Jersey: Princeton University Press.
33. Selgelid, Michael J. (2014). Moderate eugenics and human enhancement. *Medicine, Health Care and Philosophy*. 17 (1).
34. Stepan, Nancy L. (1996). *The Hour of Eugenics: Race, Gender, and Nation in Latin America*. Ithaca and London: Cornell University Press.
35. <https://www.coe.int/en/web/conventions/full-list/-/conventions/treaty/164>
36. <https://www.e-draft.am/projects/322>
37. <http://content.time.com/time/subscriber/article/0,33009,995465,00.html>

Anna Vardapetyan

*Prosecutor General of the Republic of Armenia,
Associate Professor at the Chair of Criminal Law
of Yerevan State University,
Ph.D. in Law*

CRIMINALIZATION OF EUGENICS EXPERIMENTS IN MODERN PERIOD OF DEVELOPMENT OF THE BIOMEDICAL TECHNOLOGIES⁴⁷

Abstract

The article refers to analysis of the articles of the former and current Criminal Codes of the Republic of Armenia criminalizing eugenic experiments, i.e. acts aimed at selection of human. It refers also to analysis of historical developments of “eugenics”, contradictory approaches to “eugenics” in different periods of time, as well as the international treaties and internal regulations of the Republic of Armenia on eugenics.

Technological development in the field of genetics led to the creation of the notion of the new eugenics, which aroused numerous discussions, primarily regarding the continuity or discontinuity of the new eugenics with the old eugenics. Establishing the differences or similarities with the old eugenics and different definitions of the new eugenics, do not provide a clear roadmap about what behaviors are contrary to the basic values, which should be protected at state level. Based on research done within the scopes of this article, the author suggests amendment to the Article 186 of the Criminal Code of the RA.

Keywords: eugenics; positive and negative eugenics; embryo; fetus; cloning; sterilization; selection; genome; biomedicine; international documents on eugenics; reproduction.

⁴⁷ The article was presented on 01.06.2023 and was reviewed on 09.06.2023

Анна Вардапетян

*Генеральный прокурор Республики Армения,
Доцент кафедры уголовного права
Ереванского государственного университета,
кандидат юридических наук*

КРИМИНАЛИЗАЦИЯ ЕВГЕНИЧЕСКИХ ОПЫТОВ НАД ЧЕЛОВЕКОМ В СОВРЕМЕННОМ ПЕРИОДЕ РАЗВИТИЯ БИОМЕДИЦИНСКИХ ТЕХНОЛОГИЙ⁴⁸

Абстракт

Данная статья посвящена анализу норм действующего и утратившего силу уголовных кодексов РА, криминализирующих деяния, связанные с евгеническими опытами, т.е. деяниями, направленными на селекцию человека. В статье проанализированы историческое развитие евгеники, противоречивые подходы к евгенике в разные периоды времени, а также международные договоры по вопросам евгеники и внутригосударственное законодательство Республики Армения по данному вопросу.

Технологическое развитие в области генетики привело к созданию понятия новой евгеники, которое вызвало многочисленные дискуссии, связанные, в основном, с преемственностью старой евгеники. Установление различий или сходств со старой евгеникой и различных определений новой евгеники не дает четкого представления о том, какое поведение противоречит основным ценностям, которые следует защищать на государственном уровне. На основании исследования, проведенного в рамках данной статьи, автор предлагает внести поправки в статью 186 уголовного кодекса РА.

Ключевые слова: евгеника; позитивная и негативная евгеника; эмбрион; фетус; клонирование; стерилизация; селекция; геном; биомедицина; международные документы о евгенике; репродукция.

⁴⁸ Статья была представлена 01.06.2023 и прошла рецензирование 09.06.2023.

Սրբուհի Գալյան

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԶՐԵԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՆԵՐԴՐՄԱՆ
ՀԻՄՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ¹**

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում գործող իրավա- նորմերին համահունչ իրավաբանական անձանց հանցավոր արարքների հակ- ազդման մեխանիզմների քննարկմանն ու այդպիսի պայքարի լավագույն մոդելի ներկայացմանը:

Հիմքում ունենալով իրավաբանական անձի իրավասուբյեկտության հանգա- մանքը և այն, որ ներկայում իրավաբանական անձինք գործունեություն են ծա- վալում մեր կյանքի գրեթե բոլոր ոլորտներում՝ շոշափելով ֆիզիկական անձանց իրավունքներն ու օրինական շահերը՝ աշխատանքում ընդգծվել է իրավաբանա- կան անձանց հնարավոր հանցավոր գործունեությունից հասարակությունը պաշտպանելու կարևորությունը:

Հաշվի առնելով մեր պետությունում իրավունքի նյութերի գոյությունն ու դրանց ինքնավարությունը՝ հոդվածում քննարկման առարկա է դարձվել իրավա- բանական անձանց հանցավոր գործունեության համար պատասխանատվության քրեական եղանակի ընտրության հիմնավորվածությունը:

Պատասխանատվության քրեական եղանակի ընտրությունը հոդվածում հիմնավորվել է ինչպես ներպետական իրավակարգավորումների տրամաբանու- թյան, այնպես էլ միջազգային իրավական փաստաթղթերի պահանջների համա- տեքստում:

Աշխատանքում անդրադարձ է կատարվել նաև իրավաբանական անձի՝ հան- ցագործության սուբյեկտ հանդիսանալու հնարավորությանը, ներկայացվել են իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը սահմանող նոր- մերի կատարելագործմանը միտված առաջարկներ, որոնք, մեր կարծիքով, լի- արժեք և առավել համակարգային կդարձնեն իրավաբանական անձանց հանցավոր գործունեության դեմ պայքարը:

¹ Հոդվածը ներկայացվել է 01.06.2023թ., գրախոսվել է 08.06.2023թ.:

Հիմնաբառեր - իրավաբանական անձ, իրավաբանական անձի պատասխանատվություն, պատասխանատվության մոդելներ, իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտ, հանցագործության սուբյեկտ; մեղք, իրավաբանական անձի մեղք:

Ներածություն

Ներկայում մեր հասարակությունում իրավաբանական անձանց դերը գերազնահատելը դժվար է: Այսօր իրավաբանական անձինք գործունեություն են ծավալում կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: «Կազմակերպությունն ունի ուղեղ, նյարդային կենտրոններ, որոնք կարգավորում են նրա գործողությունները, ինչպես նաև ձեռքեր, որոնք գործում են կենտրոնական համակարգի հանձնարարությամբ»²: Իրավաբանական անձին բնութագրող այս միտքը, թերևս, բավականին լավ նկարագրում է իրավաբանական անձի էությունը՝ ընդգծելով նրա, իրավական հարաբերություններում ինքնուրույն սուբյեկտ հանդիսանալու հանգամանքը:

Ակներև է, որ հանրության լայն շերտերին առնչվող մի շարք ոլորտներում, օրինակ՝ հանքարդյունաբերության կամ սննդամթերքի արտադրության գործունեություն ծավալող կազմակերպությունների հակաիրավական գործողությունների արդյունքում, կարող է պատճառվել շատ ավելի մեծ վնաս, քան մեկ ֆիզիկական անձի կողմից: Ընդ որում՝ չեն բացառվում այնպիսի իրավիճակները, երբ կազմակերպության հակաիրավական գործունեությանը հնարավոր չլինի տալ իրավական գնահատական՝ պայմանավորված հանցագործություն կատարած ֆիզիկական անձի նույնականացման անհնարինությամբ: Այդ անհնարինությունը կարող է պայմանավորված լինել իրավաբանական անձի բազմաքանակ աշխատակիցներ ունենալու և դրա ներքին իրավական կարգավորումների թերի լինելու հանգամանքներով:

Իսնդիրը հատկապես ակնհայտ է շրջակա միջավայրի անվտանգության և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների պարագայում:

Կրասնոյարսկում գործող ընկերությունը Ենիսեյ գետի աջ ափի երկայնքով արտանետում էր ռադիոակտիվ ջրեր, որոնցում վտանգավոր նյութերի քանակը տասն անգամ գերազանցում էր թույլատրելի սահմանը, և ջրի վարակված հոսքը ձգվում էր հարյուրավոր կիլոմետրեր: Արդյունքում նկատվում էր օնկոլոգիական և այլ հիվանդությունների կտրուկ ան Ենիսեյ գետի աջ ափին գտնվող բնակավայրերի բնակիչների շրջանում³:

Ռ.Դ. Գերագույն դատարանի պլենումն իր ղեկավար պարզաբանումներից մե-

² Steu՝ Уголовное право зарубежных государств. Общая часть / Под ред. И.Д. Козочкина. - М., 2003., էջ 46:

³ Ste՝u Козлов А.П. Понятие преступления. - СПб., 2004, էջ 397:

կում նշել է. «Բնության վրա խիստ անբարենպաստ ներգործություն ունեն հենց արդյունաբերական և գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվող ընկերությունները»⁴:

Հասարակությանը և, առհասարակ, Երկիր մոլորակում կյանքին ուղղված հիմնական սպառնալիքը բխում է ոչ թե առանձին մարդասպանից կամ մարդասպանների խմբից, այլ բազմաթիվ ընկերությունների գործունեության արդյունքում շրջակա միջավայրի լուրջ աղտոտումից: Այս սպառնալիքը պետք է կանխել հնարավոր բոլոր եղանակներով. անհրաժեշտ է խստացնել ընկերությունների պատասխանատվությունը շրջակա միջավայրը աղտոտելու համար: Անհրաժեշտ է նրանց դնել լուծարման վտանգի տակ, մշակել այնպիսի սանկցիաներ, որ թունավոր նյութերի արտանետումը կազմակերպության համար ավելի թանկ արժենա, քան համապատասխան նորմատիվներին հետևելու համար համապատասխան միջոցառումների ձեռնարկումը⁵:

Հանցավորության դեմ պայքարին միտված օրենսդրությունն անպայմանորեն պետք է հաշվի առնի պետության սոցիալական և տնտեսական վիճակը, կյանքի բոլոր ոլորտների վիճակն ու զարգացման միտումները⁶: Հենց այդ հանգամանքների հաշվառմամբ է որոշակի երևույթը սահմանվում որպես հանրորեն վտանգավոր և պատժելի:

Ներկայում իրավաբանական անձի հնարավոր հանցավոր ոսնձգություններից անհատի, հասարակության և պետության իրավունքների և օրինական շահերի պաշտպանության օբյեկտիվ անհրաժեշտությունն անվիճելի է: Այլ հարց է պաշտպանության միջոցի ընտրությունը:

ՀՀ Քրեական նոր օրենսգրքում (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությանն առնչվող նորմերի գոյությունն արդեն իրողություն է: Չնայած դրան, իրավաբանական հանրության շրջանակներում դեռևս չեն դադարել բանավեճերը քննարկվող ինստիտուտի նախատեսման նպատակահարմարության, դրա՝ ներպետական իրավական համակարգին օտար և «ոչ սազական» լինելու, ինչպես նաև գործնական կիրառության ընթացքում առաջանալիք «անխուսափելի» խնդիրների հետ:

Նշված քննարկումները գուցե այն պատճառով են, որ այս ինստիտուտը դեռևս չունի գործնական կիրառություն: Մինչ դա, գտնում ենք, որ կա անհրաժեշտություն՝ հիմնավորելու, թե ինչ հանգամանքներով է պայմանավորված իրավաբանական անձանց համար պատասխանատվության հենց քրեական և ոչ թե այլ՝ քաղաքացիական կամ վարչական եղանակի ընտրությունը:

⁴ Ст'у Бюллетень Верховного суда РСФСР - 1991.-№5, էջ 11:

⁵ Ст'у Козлов А.П. Понятие преступления. - СПб., 2004, էջ 398:

⁶ Ст'у Прокументов Л.М., Шеслер А.В. Криминология: часть общая: Учебное пособие. - Красноярск, 1997, էջ 243:

ՀՀ-ում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտի ներդրման նպատակահարմարությունն ու հիմնավորվածությունը գնահատելիս անհրաժեշտ է մեր պետությունում գործող իրավանորմերի լույսի ներքո քննարկման առարկա դարձնել հետևյալ հարցերը՝

- արդյո՞ք իրավաչափ է իրավաբանական անձին ենթարկել պատասխանատվության հանցավոր արարքի համար,
- արդյո՞ք նման պատասխանատվությունը պետք է լինի քրեական: Այս հարցերի քննարկումն է ընկած աշխատանքի հիմքում:

1. Իրավաբանական անձանց՝ հանցավոր արարքների համար պատասխանատվության ենթարկելու հիմքերը

Դեռևս 19-րդ դարի կեսերին իրավաբանական անձանց՝ հանցավոր արարքների համար պատասխանատվության կիրառումն ընդունելի և հնարավոր է եղել ընդհանուր իրավունքի երկրներում: Ինչ վերաբերում է մայրցամաքային իրավունքի երկրներին, ապա եվրոպական մի շարք երկրների պարագայում այդպիսի հնարավորությունն ուրվագծվել է միայն 20-րդ դարում:

1927 թվականին Բուդապեշտում քրեական իրավունքի միջազգային կոնգրեսը հանդես է եկել դրա նախատեսման անհրաժեշտության վերաբերյալ հայտարարությամբ, իսկ արդեն 1988 թվականին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից ընդունվել է № R (88) 18 հանձնարարականը՝ իրավախախտումների համար իրավաբանական անձանց պատասխանատվության վերաբերյալ⁷:

Այս փաստաթուղթը պետություններին ուղղված համակարգված հանձնարարական-առաջարկ է իրավաբանական անձանց իրավախախտումների համար պատասխանատվության միջոցներ սահմանելու վերաբերյալ, որն ընդունվել է՝ հաշվի առնելով կազմակերպությունների կողմից կատարվող իրավախախտումների քանակական աճը, դրանց արդյունքում անհատներին և հասարակությանը պատճառվող վնասի չափը, ինչպես նաև այն, որ հաճախ իրավաբանական անձի բարդ կառուցվածքի պատճառով հնարավոր չի լինում նույնականացնել անմիջականորեն իրավախախտում կատարած ֆիզիկական անձին: Մասնավորապես, դրանում ասվում է, որ առաջարկությունները մշակվել են քաղաքացիական պատասխանատվության միջոցների գոյությունից անկախ իրավաբանական անձանց կողմից իրենց գործունեության ընթացքում կատարած իրավախախտումների համար պատասխանատվության ենթակա լինելու հնարավորությունը և պատասխանատվության համապատասխան միջոցների սահմանումը խթանելու համար: Ընդ որում՝ առաջարկները կիրառելի են և՛ մասնավոր, և՛ պե-

⁷ St'u Liability of enterprises for offences, Recommendation No. R (88) 18 adopted by the Committee of Ministers of the Council of Europe on 20 October 1988 and explanatory memorandum Strasbourg 1990, <http://surl.li/htagc> (վերջին մուտքը՝ 06.06.2023).

տական այն կազմակերպությունների համար, որոնք ունեն իրավաբանական անձի կարգավիճակ և իրականացնում են առևտրային գործունեություն:

Բուն առաջարկների բովանդակությունը հանգում է հետևյալին՝

1. կազմակերպությունը պետք է ենթակա լինի պատասխանատվության իր գործունեության ընթացքում կատարած իրավախախտման համար նույնիսկ այն դեպքում, երբ իրավախախտումը չի բխում այդ կազմակերպության գործունեության նպատակներից,
2. կազմակերպությունը պետք է ենթակա լինի պատասխանատվության՝ անկախ այն հանգամանքից, թե իրավախախտման կատարմանը հանգեցրած գործողություն կատարած ֆիզիկական անձին հնարավոր է նույնականացնել, թե ոչ,
3. կազմակերպությանը պատասխանատվության ենթարկելու հարցը գնահատելիս պետք է քննարկման առարկա դառնան՝
 - 3.1. քրեական պատասխանատվության և պատժամիջոցների կիրառման հնարավորությունն այն դեպքում, երբ իրավախախտման բնույթը, կազմակերպության մեղքի աստիճանը, հասարակությանը պատճառված վնասի չափը, հետագա իրավախախտումների կանխելու անհրաժեշտությունը այդպես են պահանջում,
 - 3.2. պատասխանատվության այլ միջոցների կիրառման նպատակահարմարությունն այնպիսի իրավախախտումների պարագայում, որոնք հանցանքի հատկանիշներ չեն պարունակում (օրինակ՝ վարչական իրավախախտումների դեպքում),
4. կազմակերպության պատասխանատվությունը պետք է բացառվի այն դեպքում, երբ դրա ղեկավարությունը ներգրավված չէ հանցագործության կատարման մեջ և ձեռնարկել է հանցագործությունը կանխելու համար բոլոր անհրաժեշտ միջոցները,
5. կազմակերպության պատասխանատվությունը չպետք է բացառի հանցագործություն կատարած ֆիզիկական անձի պատասխանատվությունը,
6. իրավաբանական անձանց նկատմամբ պատիժներ նշանակելիս հատուկ ուշադրություն է պետք դարձնել պատժի այնպիսի նպատակներին, ինչպիսիք են հետագա իրավախախտումների կանխումն ու պատճառված վնասների վերականգնումը:

Հարկ է հաշվի առնել, որ պատիժները և ներգործության միջոցները պետք է լինեն այնպիսին, որ կիրառելի լինեն կազմակերպության նկատմամբ:

Քննարկվող հանձնարարականը բավականին մեծ ազդեցություն է ունեցել տարբեր ոլորտներում և տարբեր ժամանակներում ընդունված կոնվենցիաների վրա, որոնցից շատերը կրկնում են հանձնարարականի դրույթները:

Այսպես, Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է միջազգային մի շարք կոնվենցիաներ, որոնք ուղղակի պահանջ են նախատեսում մշակել իրավա-

բանական անձանց պատասխանատվության միջոցներ հատկապես կոռուպցիոն և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի շրջանակներում: Մասնավորապես՝ նման դրույթներ են ամրագրված «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ», «Կոռուպցիայի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիաներում, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի «Կոռուպցիայի մասին քրեական իրավունքի» կոնվենցիայում, որոնց համաձայն՝ յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է իրավաբանական անձանց պատասխանատվության համար ապահովել արդյունավետ, համաչափ և կանխարգելիչ նշանակություն ունեցող պատասխանատվության միջոցներ:

Այսինքն՝ ասվածից բխում է, որ խոսքն ուղղակի և միայն քրեական պատասխանատվության մասին չէ. պատասխանատվության տեսակի ընտրությունը թողնված է պետություններին, միաժամանակ, սակայն, հանցագործության համար իրավաբանական անձի պատասխանատվության միջոցները պետք է ապահովեն նշված կոնվենցիաներով սահմանված պայմանները՝ լինեն համաչափ, արդյունավետ և ունենան կանխարգելիչ ազդեցություն:

2. Իրավաբանական անձանց հանցավոր արարքների համար պատասխանատվության եղանակի ընտրությունը

Տեսական գրականության մեջ լայն քննարկում է ծավալվել հետևյալ հարցադրման շուրջ՝ արդյո՞ք կազմակերպությունների հանրորեն վտանգավոր արարքների կանխման համար վարչական կամ քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցները չեն կարող բավարար լինել:

Ն. Ֆ. Կուզնեցովան գտնում է հետևյալը. «Եթե պահանջվում է խստացնել իրավաբանական անձանց պատասխանատվությունը, և եթե դրա կարիքը իրոք կա, ապա լիովին հնարավոր է դա իրագործել քաղաքացիական, վարչական և ֆինանսական իրավունքների շրջանակներում, իսկ Գ. Ի. Բոգուշը գտնում է, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը դժվար թե բարելավի առկա դրությունը. «(...) Էկոլոգիական և տնտեսական հանցագործությունների պարագայում նման պատասխանատվության սահմանումը, ի հեճուկս նման պատասխանատվության սահմանման կողմնակիցների սպասումների, միայն կրարդացնի հասարակական կյանքի այդ ոլորտներում առկա կրիմինոգեն վիճակը, յուրօրինակ նվեր կհանդիսանա գործարար ոլորտն ահաբեկող կոռուպացված պաշտոնատար անձանց համար, կնպաստի իրական մեղավորների պատասխանատվությունից խուսափելուն»⁸:

Այս կարծիքն ունեն մի շարք իրավաբան տեսաբաններ ևս, որոնք հիմնավորված չեն համարում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվու-

⁸ Տե՛ս Բոгуш Г.И. К вопросу об уголовной ответственности юридических лиц // Вестник МГУ. Серия 11 Право. - 2005. - №4, էջ 23:

թյան հնարավորությունը⁹: Նրանք մատնանշում են ըստ մեղքի և անձնական պատասխանատվության սկզբունքները, որոնք, ըստ նրանց, անհամատեղելի են իրավաբանական անձի քրեական պատասխանատվության հետ: Միաժամանակ, հարկ է նկատել, որ նույն տեսաբանները լիովին արդարացված են համարում իրավաբանական անձանց վարչական կամ քաղաքացիական պատասխանատվության ինստիտուտների առկայությունը:

Այս կապակցությամբ Ե. Վինոգրադովան, մեր կարծիքով, արդարացիորեն նշել է, «Եթե իրավաբանական անձանց պատասխանատվությունը կարող է կիրառվել վարչական և քաղաքացիական իրավունքում, անհասկանալի է, թե ինչու՞ դրա կիրառումը հիմնավորված չի համարվում քրեական իրավունքում»¹⁰:

Նույն կարծիքին է նաև Յու. Պ. Կռավեցը, «(...) շուկայական տնտեսությանն անցում կատարելու պայմաններում գործարար ոլորտը հանդիսանում է ամենաքրեականացվածը, և կարիք է զգացվում այդ ոլորտը պաշտպանել ոչ միայն քաղաքացիաիրավական և վարչական միջոցներով, այլև քրեաիրավական»¹¹:

Հարկ է նկատել, որ աշխարհում իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության մեկ միասնական ընդունելի մոդել գոյություն չուի: Պատմությունը ձևավորել է այս ինստիտուտի կիրառման մի շարք տարբերակներ՝ պայմանավորված երկրների իրավական համակարգերի տարբերությամբ, սոցիալ-քաղաքական առանձնահատկություններով, տնտեսական զարգացման աստիճանով և մի շարք այլ հանգամանքներով¹²:

Այսպես օրինակ՝ մի շարք, հատկապես ընդհանուր իրավունքի երկրներում, իրավաբանական անձը ֆիզիկական անձի հետ միաժամանակ հանդես է գալիս որպես հանցագործության ինքնուրույն սուբյեկտ (Անգլիա, ԱՄՆ, Շոտլանդիա և այլն):

Երկրորդ մոդելի համաձայն՝ հանցագործության սուբյեկտ է հանդիսանում միայն ֆիզիկական անձը, սակայն հանցագործությանը իրավաբանական անձի մասնակցության դեպքում վերջինիս նկատմամբ կիրառվում են քրեաիրավական ներգործության միջոցներ: Այսինքն՝ իրավաբանական անձը դիտարկվում է ոչ թե որպես հանցագործության, այլ քրեական պատասխանատվության սուբյեկտ: Այս մոդելը գործում է, օրինակ, Ալբանիայում, Իսպանիայում, Լատվիայում, Թուրքիայում:

⁹ Տե՛ս օրինակ՝ Иванцов П.П. Проблема ответственности юридических лиц в российском уголовном праве: Дисс. ... канд. юрид. наук: 12.00.08. - СПб., 2000»

¹⁰ Տե՛ս Виноградова Е. Юридические лица должны нести ответственность за экологические преступления // Российская юстиция. - 2001 - №8, էջ 62:

¹¹ Տե՛ս Кравец Ю.П. Об уголовной ответственности юридических лиц за преступления в сфере предпринимательской деятельности // Журнал российского права. - 2004. - №6, էջեր 72-77:

¹² Տե՛ս Ս. Գալյան Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հիմնական մոդելները արտասահմանյան երկրներում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 2015թ., էջ 466

Երրորդ մոդելի համաձայն՝ հանցագործության համար իրավաբանական անձը ենթարկվում է ոչ թե քրեական, այլ վարչական պատասխանատվության, այդ իսկ պատճառով այս մոդելն այլ կերպ կոչվում է «իրավաբանական անձանց քվազիքրեական պատասխանատվություն»: Գերմանիան և Իտալիան, լինելով այնպիսի պետություններ, որոնք ավանդաբար դիմադրել են իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ինստիտուտին, քրեական գործերով դատարաններին շնորհել են իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու համար վարչական վարույթ իրականացնելու իրավասություն¹³:

Ինչպես գիտենք, Օրենսգիրքը հիմնված է մեղքի հոգեբանական տեսության վրա, համաձայն որի՝ մեղքն անձի հոգեբանական վերաբերմունքն է իր կողմից կատարվող արարքի և դրա վտանգավոր հետևանքների նկատմամբ: Ուստի, առաջին հայացքից ներկա կարգավորումներն, ըստ էության, բացառում են իրավաբանական անձին հանցագործության սուբյեկտ համարելու հնարավորությունը:

Մինևույն ժամանակ, հարկ է նկատել, որ ներպետական իրավական կարգավորումները ոչ միայն չեն բացառում, այլև նախատեսում են իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ իրավաբանական անձը քաղաքացիական իրավահարաբերություններում հանդես է գալիս որպես լիարժեք սուբյեկտ, որը կարող է իր անունից ձեռք բերել ու իրականացնել իրավունքներ, կրել պարտականություններ և ենթարկվել պատասխանատվության:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը (այսուհետ՝ ՎԻՎ օրենսգիրք) ևս նախատեսում է իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը, ընդ որում՝ որոշ հոդվածներով նման հնարավորությունը սահմանված էր նախքան քրեական նոր օրենսգրքի ընդունումը:

Ուշագրավ է, որ ՎԻՎ օրենսգրքի համաձայն՝ զանցանքը, ինչպես հանցանքը, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) գործողությունը կամ անգործությունն է: Այսինքն՝ անկախ այն հանգամանքից, որ նշված օրենսգիրքը ՀՀ քրեական օրենսգրքի նմանությամբ հիմնված է մեղքի հոգեբանական տեսության վրա, և իրավաբանական անձի մեղքի հետ կապված հարցերի կարգավորումները դրանում բացակայում են, մինևույնն է այն նախատեսում է/էր իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը: Այսինքն՝ մինչև քրեական նոր օրենսգրքի ընդունումը, մեր իրավական համակարգին արդեն ծանոթ էր իրավաբանական անձի պատասխանատվության սուբյեկտ հանդիսանալու հանգամանքը, ուստի՝ կարելի է եզրակացնել, որ արդեն իսկ ուրվագծված էին իրավաբանական անձին քրեական պատասխանատվության սուբյեկտ դիտար-

¹³ Տե՛ս Մ. Փիեթ, Լ.Ա. Լոու և Փ.Ջ. Քայն (խմբ.) (2007 թվական), Կաշառելու դեմ պայքարի ՏՀԶԿ-ի կոնվենցիա. ծանոթագրություն, Քեմբրիջ, ՄԹ. Քեմբրիջի համալսարանի իրատարակչություն. էջ 223

կելու, դրա նկատմամբ քրեաիրավական ներգործության միջոցներ կիրառելու հնարավորությունները:

Հարկ է նկատել, որ մեր օրենսդիրը գնացել է հենց այդ ճանապարհով:

Հիմքում ունենալով իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության նույնականացման տեսությունը¹⁴, համաձայն որի՝ իրավաբանական անձի գործողությունները նույնացվում են իրավաբանական անձի որոշ աշխատակիցների (հատկապես՝ ղեկավար պաշտոն զբաղեցնող), ներկայացուցիչների գործողությունների հետ՝ Օրենսգրքը իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հիմքերը սահմանել է նշված տեսությանը համահունչ:

Մասնավորապես՝ Օրենսգրքի 123-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե՝

1) հանցանքը կատարվել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի կամ այդպիսի անձի թողտվությամբ կամ դրդմամբ իրավաբանական անձին ներկայացնող անձի կողմից՝ իրավաբանական անձի անունից հանդես գալով և ի շահ իրավաբանական անձի գործելով,

2) իրավաբանական անձի կողմից չի ապահովվել դրա գործունեությունը կարգավորող օրենքով կամ այլ իրավական ակտով նախատեսված պարտականությունների կատարումը, որը հանգեցրել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի, իրավաբանական անձին ներկայացնող անձի կամ իրավաբանական անձի աշխատողի կողմից հանցանքի կատարմանը,

3) հանցանքը կատարվել է իրավաբանական անձի գործունեության կամ դրա կողմից կայացվող որոշումների վրա ազդելու իրավասություն ունեցող անձի կամ իրավաբանական անձին ներկայացնող անձի կողմից՝ իրավաբանական անձի անունից հանդես գալով կամ իրավաբանական անձի միջոցով (այն օգտագործելով):

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 438-րդ հոդվածի համաձայն՝ իրավաբանական անձի վերաբերյալ վարույթ կարող է նախաձեռնվել միայն, եթե ՀՀ քրեական օրենսգրքի 123-րդ հոդվածի 1-ին մասում նշված հանցանքի կապակցությամբ առկա է՝

1) օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ,

2) ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդում չհարուցելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին օրինական ուժի մեջ մտած որոշում:

Այսինքն՝ նշված նորմերից բխում է, որ իրավաբանական անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել բացառապես ֆիզիկական անձի՝ այդպիսի պատասխանատվության ենթարկվելու կամ դրա անհնարինության

¹⁴ Տե՛ս Ս. Գայան, Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հիմնական մոդելները արտասահմանյան երկրներում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սասփրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 2015 թ. էջ 468

դեպքում: Ընդ որում, վերջինի պարագայում պարտադիր է, որ ֆիզիկական անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցված լինի ոչ ռեաբիլիտացիոն հիմքով:

Անհերքելի է, որ մեր պետությունում իրավաբանական անձանց հանցավոր վարքագծին հակազդելու և այդպիսի վարքագծի կանխման տեսանկյունից քրեական պատասխանատվության ինստիտուտի ներդրումն առաջընթաց քայլ է, սակայն, մեր կարծիքով, Օրենսգրքի կարգավորումներն ամբողջությամբ չեն լուծում իրավաբանական անձանց հանցավոր գործունեության դեմ պայքարի հետ կապված խնդիրները, այդ թվում այնպիսիները, որոնք առաջադրված են վերը քննարկված միջազգային փաստաթղթերում:

Գտնում ենք, որ կազմակերպությունը պետք է ենթակա լինի պատասխանատվության՝ անկախ այն հանգամանքից, թե իրավախախտման կատարմանը հանգեցրած գործողություն կատարած ֆիզիկական անձին հնարավոր է նույնականացնել և պատասխանատվության ենթարկել, թե ոչ:

Հատկանշական է, որ մեր պետությունում էկոլոգիական հանցագործությունների քննության վերաբերյալ (օրինակ՝ մթնոլորտային օդն աղտոտելը, ջրերն աղտոտելը և այլն) վիճակագրությունը բացակայում է, ինչը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, սակայն առաջին հերթին պետք է նշել նմանատիպ գործերի քննության բարդությունը, որը, ի թիվս այլնի, հետևյալն է. առանձին ֆիզիկական անձանց մեղքը և նրանց գործողության և առաջացած հետևանքի միջև պատճառական կապն ապացուցելը բարդ է, որոշ դեպքերում գրեթե անհնար: Օրինակ՝ հանքարդյունաբերությամբ զբաղվող ընկերության գործունեության ընթացքում ամիսներ շարունակ խմելու ջրամատակարարման աղբյուրներն աղտոտվել են: Այդ ամիսների ընթացքում փոփոխվել են ինչպես ընկերության ղեկավար անձնակազմը, այնպես էլ շարքային աշխատողները: Ընդ որում, որևէ ներքին իրավական ակտով հնարավոր չէ պարզել, թե ով է կրել խմելու ջրամատակարարման աղբյուրներն աղտոտումից զերծ պահելու պարտականությունը: Այսինքն՝ աշխատակիցների լիազորությունների շրջանակը հստակ նույնականացնելը հնարավոր չէ: Նման դեպքերում հասարակությանը հասցվող վնասը կարող է ահռելի լինել, իսկ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու հեռանկարը ոչ այնքան իրատեսական:

Նշված խնդրի լուծման համար հարկ է քննարկման առարկա դարձնել իրավաբանական անձին հանցագործության սուբյեկտ դիտարկելու հնարավորության հարցը:

Ասվածը ենթադրում է օրենսդրական մի շարք փոփոխություններ և լրացումներ:

Մասնավորապես, անհրաժեշտ կլինի փոփոխել ըստ մեղքի պատասխանատվության և անձնական պատասխանատվության սկզբունքները՝ դրանց բովանդակությունը ֆիզիկական անձանցից բացի տարածելով նաև իրավաբանական

անձանց նկատմամբ: Անհրաժեշտություն կառաջանա նաև փոփոխություններ կատարել պատժի նպատակները սահմանող նորմում՝ իրավաբանական անձանց դեպքում բացառելով վերասոցիալականացման նպատակը: Անհրաժեշտ փոփոխությունների շարքում թերևս ամենաառանցքայինը պետք է լինի իրավաբանական անձի մեղքի առանձին հասկացության սահմանումը:

Հարկ է նկատել, որ տեսական գրականության մեջ այս գաղափարը քննարկման առարկա է դարձվել իրավաբանական անձի մեղքի օբյեկտիվ (վարքագծային կամ կազմակերպական) տեսության շրջանակներում, համաձայն որի՝ իրավաբանական անձի պատասխանատվությունը սահմանվում է՝ ելնելով իրավաբանական անձի կորպորատիվ մշակույթի թերություններից: Իրավաբանական անձի ինքնուրույն մեղքի սահմանման կողմնակիցները նշում են, որ դրա անհրաժեշտությունը բխում է իրավաբանական անձի ինքնուրույն և լիարժեք իրավունքի սուբյեկտ հանդիսանալու հանգամանքից, իսկ այս կամ այն ֆիզիկական անձի արարքի մեղսագրումը դրան հակասում է այդ գաղափարին:

Այս տեսության շրջանակներում առաջարկվում է իրավաբանական անձի մեղք հասկացությունը սահմանել հետևյալ կերպ՝ «իրավաբանական անձի կողմից կատարված հանցանքը համարվում է մեղավոր, եթե իրավաբանական անձը հնարավորություն ուներ հետևելու այն նորմերին ու կանոններին, որոնց խախտման համար նախատեսված է քրեական պատասխանատվություն, սակայն իրավաբանական անձի կողմից չեն իրականացվել բոլոր միջոցները դրանք պահպանելու ուղղությամբ: Այլ կերպ ասած՝ իրավաբանական անձը մեղավոր է ճանաչվում կատարված իրավախախտման համար, եթե նա պարտավոր էր կատարել իր վրա դրված պարտականությունները, սակայն չի կատարել դրանք, չնայած նման հնարավորություն ունեցել է¹⁵:

Կարծում ենք՝ իրավաբանական անձի կողմից քրեական պատասխանատվություն նախատեսող օրենսդրական նորմերի խախտման փաստի, իսկ նյութական հանցակազմերի դեպքում՝ նաև հետևանքների առկայության հաստատումը, ինչպես նաև հետևանքների կանխման ուղղությամբ իրավաբանական անձի պատշաճ ջանասիրություն չդրսևորելը պետք է բավարար լինեն իրավաբանական անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Մինևույն ժամանակ, պետք է ապացուցվի, որ այդ նորմերի խախտումը տեղի է ունեցել իրավաբանական անձի կողմից դրանք պահպանելու իրական հնարավորություն ունենալու դեպքում՝ իրավաբանական անձից անկախ հանգամանքների բերումով օրենսդրական պահանջների ցանկացած խախտման պարագայում վերջինիս քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը բացառելու համար:

Մինևույն ժամանակ հարկ է նկատել, որ Օրենսգրքի 123-րդ հոդվածում ամրագրված կանոնը, որը բխում է վերը քննարկված կոնվենցիոն պահանջներից,

¹⁵ St' u Ситковский И.В. Уголовная ответственность юридических лиц: Дис. ... канд. юрид. наук: 12.00.08. - М., 2003, էջ174

այն է՝ ֆիզիկական անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չի բացառում նույն հանցագործության համար իրավաբանական անձի քրեական պատասխանատվությունը, պետք է ամրագրվի նաև հակառակ տրամաբանությամբ: Այսինքն՝ իրավաբանական անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չպետք է բացառի նույն հանցագործության համար ֆիզիկական անձի քրեական պատասխանատվությունը:

Հարկ է նկատի ունենալ նաև, որ այս փոփոխություններն ու լրացումները առաջարկվող գաղափարի իրականացմանն ուղղված առաջարկների փոքր մասն են միայն: Խնդիրը պահանջում է առավել խորքային և համակարգային լուծում:

Եզրակացություն

Ինչպես նշվեց, որոշ տեսաբաններ մերժում են իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը: Նրանցից ոմանք մատնացույց են անում Գերմանիայի օրինակը, որտեղ հաջողությամբ կիրառվում է իրավաբանական անձանց քվազիքրեական պատասխանատվությունը, սակայն նրանք մոռանում են, որ Գերմանիայում գործում է մեկ միասնական դատավարության օրենսգրքը, և վարչական ու քրեական դատավարության շրջանակներում դատավարական երաշխիքները նույնական են: Մեր պետության իրավական համակարգն այլ է. այն ունի խիստ ճյուղավորված բնույթ, որպիսի պայմաններում հանցավոր արարքների համար պատասխանատվության միջոցների սահմանումն իրավունքի այլ ճյուղով նպատակահարմար համարվել չի կարող: Կարծում ենք, որ հանցավոր արարքների շրջանակը և դրանց կատարման համար պատասխանատվությունը պետք է սահմանվեն մեկ միասնական օրենսդրական ակտով՝ ՀՀ քրեական օրենսգրքով:

Այս համատեքստում հարկ է նկատել նաև, որ վարչական կամ քաղաքացիական պատասխանատվությունը հանցավոր արարքի պարագայում չի կարող բավարարել վերը քննարկված միջազգային փաստաթղթերից բխող պահանջները և հանդիսանալ համաչափ և արդյունավետ ներգործության միջոց: Եթե հանցագործության համար իրավաբանական անձը ենթարկվի ոչ թե քրեական, այլ, օրինակ, վարչական պատասխանատվության, կամ եթե իրավաբանական անձի կողմից պատասխանատվության միջոցները սահմանվեն այլ իրավական ակտով, քան քրեական օրենսգրքով, ապա կխախտվեն արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքները: Որքան էլ խիստ լինեն ներգործության միջոցները, միևնույնն է, արդարացված չի կարող համարվել այն, որ նույն հանցավոր արարքի համար ֆիզիկական անձը ենթարկվի քրեական, իսկ իրավաբանական անձը՝ վարչական պատասխանատվության, որպես անբարենպաստ հետևանք ֆիզիկական անձի համար առաջանա դատվածություն, իսկ իրավաբանական անձի համար՝ ոչ:

Այսպիսով՝ ՀՀ-ում գործող իրավակարգավորումների լույսի ներքո իրավա-

բանական անձի կողմից հանցավոր արարքի կատարման համար հենց քրեական պատասխանատվության եղանակի ընտրությունն արդարացված է և պայմանավորված է մեր պետությունում իրավաբանական անձանց իրավասուբյեկտության, դրանց՝ որպես պատասխանատվության սուբյեկտ ճանաչելու հանգամանքներով, ինչպես նաև ՀՀ կողմից վավերացված միջազգային կոնվենցիաների պահանջներին համահունչ՝ արդյունավետ, համաչափ և կանխարգելիչ ազդեցություն ունեցող պատասխանատվության միջոցներ սահմանելու անհրաժեշտությամբ:

Միևնույն ժամանակ, գտնում ենք, որ իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության վերաբերյալ Օրենսգրքի դրույթները ենթակա են կատարելագործման: Մեր կարծիքով՝ կազմակերպությունը պետք է ենթակա լինի պատասխանատվության՝ անկախ հանցագործություն կատարած ֆիզիկական անձի նույնականացման հանգամանքից, որպեսզի նվազագույնի հասցվեն իրավաբանական անձի՝ քրեական պատասխանատվությունից խուսափելու հնարավոր դեպքերը:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. Մ. Փիեթ, Լ.Ա. Լոու և Փ.Ջ. Քալեն (խմբ.) (2007 թվական), Կաշառելու դեմ պայքարի ՏՀՁԿ-ի կոնվենցիա. ծանոթագրություն, Քեմբրիջ, ՄԹ. Քեմբրիջի համալսարանի հրատարակչություն
M. Piet, L.A. Lowe and P.J. Cullen (ed.) (2007), OECD Anti-Bribery Convention. note, Cambridge, UK. Cambridge University Press
2. Ս. Գալյան Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվության հիմնական մոդելները արտասահմանյան երկրներում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, 2015 թ.
S. Galyan The main models of criminal responsibility of legal persons in foreign countries, a collection of materials of the session of graduate students and plaintiffs of YSU Faculty of Law, 2015.
3. Богущ Г.И. К вопросу об уголовной ответственности юридических лиц // Вестник МГУ, Серия 11 Право. - 2005. - №4
Bogush G.I. About the issue of criminal liability of legal entities // Bulletin of Moscow State University, Series 11 Law. - 2005. - No. 4
4. Бюллетень Верховного суда РСФСР. - 1991.-№5
Bulletin of the Supreme Court of the RSFSR. - 1991.-№5
5. Виноградова Е. Юридические лица должны нести ответственность за экологические преступления // Российская юстиция. - 2001. - №8
Vinogradova E. Legal entities should be held responsible for environmental crimes

- // Russian justice. - 2001. - No. 8
6. Иванцов П.П. Проблема ответственности юридических лиц в российском уголовном праве: Дисс. ... канд. юрид. наук: 12.00.08. - СПб., 2000
Ivantsov P.P. The problem of liability of legal entities in Russian criminal law: Diss. ... cand. legal Sciences: 12.00.08. - St. Petersburg, 2000
 7. Козлов А. П. Понятие преступления. - СПб., 2004
Kozlov A. P. The concept of crime. - St. Petersburg, 2004
 8. Кравец Ю.П. Об уголовной ответственности юридических лиц за преступления в сфере предпринимательской деятельности // Журнал российского права. - 2004. - №6
Kravets Yu.P. About the criminal liability of legal entities for crimes in the sphere of entrepreneurial activity // Journal of Russian Law. - 2004. - No. 6
 9. Прокументов Л.М., Шеслер А.В. Криминология: часть общая: Учебное пособие. - Красноярск, 1997
Prozumentov L.M., Shesler A.V. Criminology: the general part: Textbook. - Krasnoyarsk, 1997
 10. Ситковский И.В. Уголовная ответственность юридических лиц: Дис. ... канд. юрид. наук: 12.00.08. - М., 2003
Sitkovsky I.V. Criminal liability of legal entities: Dis. ... cand. legal Sciences: 12.00.08. - M., 2003
 11. Уголовное право зарубежных государств. Общая часть / Под ред. И.Д. Козочкина. - М., 2003
Criminal law of foreign states. General part / Ed. I.D. Kozochkin. - M., 2003
 12. Liability of enterprises for offences, Recommendation No. R (88) 18 adopted by the Committee of Ministers of the Council of Europe on 20 October 1988 and explanatory memorandum Strasbourg 1990, <http://surl.li/htagc> (վերջին փոփոխումը 06.06.2023)

Srbuhi Galyan

Deputy Prosecutor General of the Republic of Armenia

JUSTIFICATION OF ESTABLISHMENT OF THE INSTITUTE OF CRIMINAL RESPONSIBILITY OF LEGAL ENTITIES IN THE REPUBLIC OF ARMENIA¹⁶

Abstract

The article is dedicated to the discussion of the mechanisms of combating the criminal acts of legal entities in accordance with the legal norms of the Republic of Armenia and the presentation of the best model of such a combat.

Based on the fact that legal entities are full subjects of law, and the fact that at present legal entities operate in almost all areas of our life, affecting the rights and legitimate interests of individuals, the paper emphasizes the importance of protecting society from possible criminal activities of legal entities.

Considering the existence of branches of law in our country and their autonomy, the justification of the choice of the criminal method of liability for the criminal activities of legal entities has been discussed in the article.

The choice of the criminal method of liability in the article was justified both in the context of the logic of domestic legal regulations and the requirements of international legal documents.

The work also touches upon the possibility of a legal entity to be considered the subject of a crime, presents proposals aimed at improving the norms that determine the criminal liability of legal entities, which, in our opinion, will make the fight against criminal activity of legal entities complete and more systemic.

Keywords: legal entity; liability of a legal entity; responsibility models; institute of criminal liability of legal entities; the subject of the crime; guilt; guilt of a legal entity.

¹⁶ The article was presented on 01.06.2023 and was reviewed on 08.06.2023.

Србуи Галян

Заместитель Генерального прокурора Республики Армения

ОБОСНОВАНИЕ ВВЕДЕНИЯ ИНСТИТУТА УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ ЮРИДИЧЕСКИХ ЛИЦ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ¹⁷

Абстракт

Статья посвящена обсуждению механизмов противодействия преступным действиям юридических лиц в соответствии с правовыми нормами, действующими в Республике Армения, и представлению наилучшей модели такой борьбы.

Исходя из того, что юридические лица являются полноправными субъектами права и в настоящее время действуют практически во всех сферах нашей жизни, затрагивая права и законные интересы физических лиц, в работе подчеркнута важность защиты общества от возможной преступной деятельности юридических лиц.

С учетом наличия в нашей стране отраслей права и их самостоятельности, в статье рассмотрено обоснование выбора уголовно-правового способа ответственности за преступную деятельность юридических лиц.

Выбор уголовно-правовой формы ответственности в статье обоснован как в контексте логики отечественных правовых норм, так и требований международно-правовых документов.

В работе также затронута возможность юридического лица рассматриваться субъектом преступления, представлены предложения, направленные на совершенствование норм, определяющих уголовную ответственность юридических лиц, что, на наш взгляд, позволит сделать борьбу с преступной деятельностью юридических лиц более полной и системной.

Ключевые слова: юридическое лицо; ответственность юридического лица; модели ответственности; институт уголовной ответственности юридических лиц; предмет преступления; вина; вина юридического лица.

¹⁷ Статья была представлена 01.06.2023 и прошла рецензирование 08.06.2023.

Արթուր Ղամբարյան

*ՀՀ դատախազության «Օրինականություն»
գիտազործնական պարբերականի խմբագրական խորհրդի անդամ,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և
սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
Հայաստանի Հանրապետության վաստակավոր իրավաբան*

ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ¹

Համառոտագիր

Հոդվածում քննարկվում է հայ իրավաբանների միջև սուր բանավեճերի տեղիք տված հարցերից մեկը՝ ՀՀ-ում ո՞ր պետական մարմիններն են իրավասու ընդունել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր՝ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմինները, որոնց օրենսդիրն է լիազորել ընդունել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր, թե՛ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված այն մարմինները, որոնց Սահմանադիրն է լիազորել ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր:

2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության տեքստը նախապատրաստած առանձին սահմանադրագետներ post factum դիրքորոշում են հայտնում այն մասին, որ ՀՀ-ում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր կարող են ընդունել միայն այն մարմինները, որոնք դրանով լիազորված են ՀՀ Սահմանադրությամբ: Հոդվածում քննադատվում է այս մոտեցումը, ինչպես նաև հիմնավորվում է, որ այդ սահմանադրագետների՝ սույն հարցի վերաբերյալ 2016 թ. դոկտրինալ աշխատանքներում արտահայտած դիրքորոշումը չի կարող համարվել Սահմանադրի ենթադրյալ կամքի բացահայտման աղբյուր (իրավունքի մեկնաբանման սուբյեկտիվ համակարգ):

Հոդվածում պատմաիրավական և իրավահամեմատական մեթոդների հիման վրա ներկայացվում է սույն հարցի վերաբերյալ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի մեկնաբանությունը:

Հեղինակը եզրակացնում է, որ ՀՀ-ում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր կարող են ընդունել միայն այն մարմինները, որոնք նախատեսված են ՀՀ Սահմանադրությամբ և միաժամանակ օրենքով լիազորված են ընդունել նման ակտ:

¹ Հոդվածը ներկայացվել է 05.04.2023թ., գրախոսվել է 09.06.2023թ.:

Հիմնաբառեր- ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմին, նորմատիվ իրավական ակտ, ենթաօրենսդրական ակտ, լիազորող նորմ, պատվիրակված օրենսդրություն, ռեզլամենտային ակտեր:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի կարգավորումը 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում նշված է.

«Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով Սահմանադրությամբ նախատեսված մարմինները կարող են օրենքով լիազորվել՝ ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր: Լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին»:

Այս նորմի մեկնաբանման վերաբերյալ հայ իրավաբանների շրջանում ծագել է բանավեճ. արդյո՞ք օրենսդիրը կարող է ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին լիազորել՝ ընդունելու ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր (այսուհետ՝ ենթաօրենսդրական ակտեր), թե՞ նման հնարավորություն ունի միայն Սահմանադիրը, այսինքն՝ ենթաօրենսդրական ակտեր կարող են ընդունել Սահմանադրությամբ նախատեսված այն մարմինները, որոնք լիազորված են ՀՀ Սահմանադրությամբ, թե՞ նրանց համար նաև օրենքով կարելի է նման լիազորություն սահմանել:

1.2. Հայ իրավաբանների բանավեճի ընդհանուր նկարագիրը

1.2.2. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի «գերմանական մոդելի» մեկնաբանությունը: Իրավաբանների մի մասը (Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան, Գ. Հովհաննիսյան, Ա. Պողոսյան) կարծում է, որ ենթաօրենսդրական ակտ կարող են ընդունել միայն Սահմանադրությամբ լիազորված մարմինները, այլ կերպ ասած՝ Սահմանադրությամբ նախատեսված այն մարմինները, որոնց Սահմանադիրն է վերապահել ենթաօրենսդրական ակտ ընդունելու իրավասություն² (այս մեկնաբանությունը պայմանական կանվանենք «գերմանական մոդելի» մեկնաբանություն): ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի

² Պողոսյան Վ., Սարգսյան Ն., Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. համառոտ պարզաբանումներ, «Տիգրան Մեծ» հրատ., ISBN 978-99941-0-772-8, Երևան, 2016, էջեր 29-30: Հովհաննիսյան Գ., «Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն», «Օմեգա պրինտ» ՍՊԸ, ISBN 978-9939-1-1108-7, Երևան, 2020, էջ 115: Պողոսյան Ա., Դիտարկումներ Ա. Ղամբարյանի «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված մարմինները և սահմանադրական մարմինները» աշխատանքի վերաբերյալ // <https://www.academia.edu/s/6d6ba6a288?fbclid=IwAR1Ov42cJcxibDVoG-h4Mk31BTZapZLpvSgPJ-eV-UjVUyhvAmYC9KkL9a0> (մուտք 20.03.2023)

«գերմանական մոդելի» մեկնաբանության համաձայն՝ ՀՀ Սահմանադրությամբ ենթաօրենսդրական ակտեր ընդունելու լիազորությամբ օժտված են միայն Կառավարությունը (ՀՀ Սահմանադրության 153-րդ հոդված, 3-րդ մաս), կառավարության անդամները (ՀՀ Սահմանադրության 152-րդ հոդված, 4-րդ մաս), ինքնավար մարմինները (ՀՀ Սահմանադրության 122-րդ հոդված, 3-րդ մաս), համայնքի ավագանին (ՀՀ Սահմանադրության 182-րդ հոդված, 3-րդ մաս), Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ՀՀ Սահմանադրության 194-րդ հոդված, 2-րդ մաս), Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը (ՀՀ Սահմանադրության 196-րդ հոդված, 5-րդ մաս), Կենտրոնական բանկը (ՀՀ Սահմանադրության 200-րդ հոդված, 5-րդ մաս) և Բարձրագույն դատական խորհուրդը (ՀՀ Սահմանադրության 175-րդ հոդված, 3-րդ մաս): Այս մոտեցմամբ, օրինակ, օրենսդիրը չի կարող սահմանել որոշակի հարցեր (դեպքեր), որոնց վերաբերյալ ՀՀ նախագահը կամ մարզպետները, որոնք ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված պաշտոնատար անձինք են, իրավասու կլինեն ընդունելու ենթաօրենսդրական ակտեր, քանի որ ՀՀ Սահմանադրությամբ այդ անձանց ենթաօրենսդրական ակտեր ընդունելու ընդհանուր լիազորություն վերապահված չէ:

Այս մոտեցումը հայկական իրականության մեջ նորույթ չէ. սահմանադրագետ Վ. Պողոսյանը և այլ մասնագետներ, որոնք 2015 թ. սահմանադրական բարեփոխումների ակտիվ դերակատարներից էին, դեռևս 2005 թ. սահմանադրական բարեփոխումների ժամանակահատվածում հանրությանը ներկայացրել էին Սահմանադրության փոփոխությունների հեղինակային նախագիծ, որի 7-րդ հոդվածի 5-րդ մասում ուղիղ (էքսպլիցիտ) նշել էին, որ նորմատիվ իրավական ակտեր կարող են ընդունել միայն Սահմանադրությամբ լիազորված մարմինները³: 2005 թ. սահմանադրական փոփոխությունների հեղինակային նախագծում նրանց հաջողվել էր բավարար հստակությամբ ձևակերպել այն միտքը, որ ՀՀ-ում նորմատիվ իրավական ակտ կարող են ընդունել բացառապես Սահմանադրությամբ լիազորված մարմինները, մինչդեռ 2015 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության (այսուհետ՝ 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրություն) տեքստում նրանց մոտեցումը էքսպլիցիտ ձևակերպված չէ (այս մասին հաջորդիվ):

1.2.3. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի տեքստային-նպատակային մեկնաբանությունը: Իրավաբանների մյուս մասը (Գ. Դանիելյան, Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, Թ. Շաքարյան, Ռ. Խանդանյան) կարծում է, որ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է, որ ենթաօրենսդրական ակտ կարող են ընդունել Սահմանադրությամբ նախատեսված

³ Պողոսյան Վ., Թովմասյան Հ., Գրիգորյան Վ., «Հայաստանի Հանրապետության սահմանադրությունում փոփոխություններ կատարելու նախագիծ», «Ժողովրդավարություն» հաս. կազմակերպություն, Երևան, 2005, էջ 9:

այն մարմինները, որոնց նման լիազորություն վերապահվել է ոչ միայն Սահմանադրությամբ, այլ նաև օրենքով⁴: Այսպես, պրոֆեսոր Գ. Դանիելյանը նշում է.

«ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված չէ որևէ սահմանափակում, ավելին՝ հստակ նշվում է, որ խտաբը ոչ միայն Սահմանադրության, այլև օրենքների հիման վրա գործելու մասին է, ուստի անհասկանալի է, թե ինչ նկատառումով օրենքով սահմանադրական մարմիններին (Սահմանադրությամբ նախատեսված մարմիններին՝ հեղ.) չի կարող վերապահվել նորմատիվ իրավական ակտեր ընդունելու լիազորություն, մասնավաճառ, որ դա երաշխիք է այդ մարմինների կողմից իրենց սահմանադրական լիազորություններն անհասկանալի կերպով տեսանկյունից»⁵:

1.2.4. Ուսումնասիրության առարկան: 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի էությունը պարզելու և «գերմանական մոդելի» մեկնաբանության խոցելի կողմերը հասկանալու համար նախ պետք է քննարկել ենթաօրենսդրական ակտերի հարաբերակցությունը պատվիրակված (դելեգացված) օրենսդրության և ռեզլամենտային ակտերի հետ, որից հետո անդրադարձ կկատարվի 2015 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի մեկնաբանությանը: Բանն այն է, որ ենթաօրենսդրական, պատվիրակված և ռեզլամենտային ակտերի տարբերակման մասին տեսական պատկերացումների բացակայության հետևանքով իրավաստեղծ մարմինները երբեմն թույլ են տալիս համակարգային սխալներ: Օրինակ՝ 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածում սահմանվեցին հարցեր, որոնք կարող էին կարգավորվել բացառապես օրենքով, ինչը, ըստ էության, նման էր ֆրանսիական սահմանադրական իրավունքում առկա ռեզլամենտային ակտերի ինստիտուտին (այդ ցանկից դուրս գործադիր իշխանությունը պետք է հնարավորություն ստանար իրականացնել առաջնային՝ առանց «օրենքի հիման վրա և ի կատարումն օրենքի» պայմանի կարգավորում): Մյուս կողմից 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրությունում ավելացվեց դրույթ այն մասին, որ նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են օրենքի հիման վրա և ի կատարումն այդ օրենքների (2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդված): Փաստորեն, 2005 թ. խմբ. ՀՀ Սահմանադրությունը նախատեսում էր և՛ դասական իմաստով ենթաօրենսդրական ակտերի մասին ընդհանուր կարգավորում, և՛ ռեզլամենտային կարգավորման տրամաբանությամբ համապատասխանող նորմեր (այս մասին հաջորդիվ):

⁴ Դանիելյան Գ., Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա (ուսումնական ձեռնարկ), «Տիգրան Մեծ» հրատ., ISBN 978-99941-0-788-9, Երևան, 2021, էջեր 33-34: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան, Պետության և իրավունքի տեսություն. 3-րդ հրատ., Երևան, 2018, էջեր 452-453:

⁵ Դանիելյան Գ., Իրավաստեղծ գործունեություն և իրավաբանական տեխնիկա (ուսումնական ձեռնարկ), «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2021, էջ 33-34:

2. Ենթաօրենսդրական, ռեգլամենտային և պատվիրակված նորմատիվ իրավական ակտերը

2.1. Ընդհանուր դրույթներ

Հարցի համակողմանի քննարկման նպատակով պետք է տեսական հարթությունում համառոտ ներկայացնել ենթաօրենսդրական ակտերի էությունը, ինչպես նաև ենթաօրենսդրական ակտերի, ռեգլամենտային ակտերի և պատվիրակված օրենսդրության հարաբերակցությունը:

2.2. Ենթաօրենսդրական ակտերը

Նախ նշենք, որ սկզբունքորեն սխալ է գործադիր իշխանության մարմինների ընդունած ցանկացած նորմատիվ իրավական ակտ ինքնաբերաբար անվանել ենթաօրենսդրական ակտ զուտ այն հիմքով, որ դա չպետք է հակասի օրենքին: Իրավական ակտը համարվում է ենթաօրենսդրական ոչ միայն այն պատճառով, որ այն չպետք է հակասի օրենքին⁶, այլ նաև այն պատճառով, որ այն պետք է ընդունվի օրենքի հիման վրա և ի կատարումն օրենքի⁷:

Եթե ենթաօրենսդրական ակտերն ընդունվում են օրենքին համապատասխան, օրենքի հիման վրա և ի կատարումն օրենքի (դասական իմաստով՝ ենթաօրենսդրական ակտ), ապա դա նշանակում է, որ դրանք պարունակում են երկրորդային նորմեր (իրականացնում է երկրորդային կարգավորում): Երկրորդային նորմերն այն կանոններն են, որոնք լրացնում և զարգացնում են օրենքում նշված առաջնային նորմերը⁸:

Որոշ իրավական համակարգերում գործադիր իշխանության մարմիններին թույլատրվում է իրականացնել օրենքի կարգավորման ոլորտից դուրս գտնվող հարաբերությունների առաջնային իրավական կարգավորում: Դա հնարավոր է այն դեպքում, երբ հարաբերության կարգավորման իրավասությունը Սահմանադրությամբ ուղղակիորեն վերապահված չէ օրենսդիր մարմնին⁹, իսկ սահմանադրական համակարգերը թույլատրում են գործադիր իշխանության մարմիններին իրականացնել այդ հարաբերության առաջնային կարգավորում, այսինքն՝ առանց «օրենքի հիման վրա և ի կատարումն օրենքի» պայմանի: Նման ակտերը դասական իմաստով ենթաօրենսդրական չեն, քանի որ դրանք չեն ընդունվել օրենքի հիման վրա և ի կատարումն օրենքի: Այդ ակտերը կոչվում են ռեգլամենտային ակտեր:

⁶ Օրինակ՝ Ս.Լ. Զիվը նշում է, որ ենթաօրենսդրականության հասկացության էությունը այն է, որ նորմատիվ ակտը պետք է համապատասխանի օրենքին: Տե՛ս Зивс С. Л. Источники права. М.: 1981. с. 111:

⁷ Отв. ред. Ю.А. Тихомиров., Конституция, закон, подзаконный акт», М., 1994. С. 52. Злобин А. В., «Юридическая природа подзаконных нормативных актов в Российской Федерации» // Вестник СГЮА., № 5 (88), 2012, с. 36.

⁸ Волкова С. Н. Регламентарные акты и их место в системе нормативных правовых актов, Сибирский юридический вестник, № 4., 2013. С. 11.

⁹ Սույն աշխատանքում օրենքի բացի պայմաններում գործադիր իշխանության մարմինների առաջնային կարգավորման հարցերը չեն քննարկվում:

2.3. Ռեզլամենտային ակտերը

Ընդհանուր մոտեցման համաձայն՝ ռեզլամենտային ակտերը գործադիր իշխանության մարմինների՝ հասարակական հարաբերությունների առաջնային կարգավորման արդյունքում ընդունած փաստաթղթերն են: «Այդ ակտերի իրավաբանական ուժը օրենքի ուժից ցածր է, սակայն դրանք ենթաօրենսդրական ակտեր չեն, քանի որ կարող են ընդունվել այնպիսի հարցերի առնչությամբ, որոնք օրենքով կարգավորված չեն»¹⁰: Ռեզլամենտային ակտերը երբեմն անվանվում են գործադիր իշխանության ինքնավար ակտեր¹¹:

Ռեզլամենտային ակտերը դասական իմաստով ենթաօրենսդրական ակտեր չեն, քանի որ այդ ակտերով կարգավորվող հարաբերությունները դուրս են օրենսդիր մարմնի կարգավորման ոլորտից, հետևապես դրանք չեն ընդունվում օրենքի հիման վրա և ի կատարումն օրենքի:

Թեև ռեզլամենտային ակտերով կարգավորվում են այն հարաբերությունները, որոնք չեն կազմում օրենսդիր մարմնի բացառիկ կարգավորման առարկան, այնուամենայնիվ գործադիր իշխանության մարմինների ակտերով հարաբերությունների առաջնային կարգավորումն անմիջապես շոշափում է իշխանության բաժանման սկզբունքը, քանի որ գործադիր իշխանությանը հնարավորություն է տրվում առանց օրենսդիր մարմնի միջամտության (առանց «օրենքի հիման վրա և ի կատարումն օրենքի» պայմանի) փաստացի ընդունել բովանդակային առումով «օրենքներ»: Այնուամենայնիվ, ռեզլամենտային ակտերի ինստիտուտը չի հակասում իշխանության բաժանման սկզբունքին, քանի որ այդ ակտերով չեն կարող կարգավորվել հասարակական կյանքի էական հարցերը: Բացի այդ, դրանց իրավաչափության նկատմամբ կարող է իրականացվել դատական վերահսկողություն: Իշխանության բաժանման սկզբունքի տեսանկյունից առավել խոցելի է պատվիրակված օրենսդրությունը:

2.4. Պատվիրակված օրենսդրությունը

«Պատվիրակված օրենսդրություն» ասելով՝ սովորաբար հասկացվում են խորհրդարանի տված հատուկ լիազորության (ուղիղ պատվիրակում) հիման վրա պետության գլխի կամ գործադիր իշխանության մարմնի ընդունած՝ օրենքի ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերը¹²:

¹⁰ Отв. ред. проф. Б.А. Страшун, «Конституционное (государственное право) зарубежных стран», в 4 т., тома 1–2, часть общая: учебник / 3-е изд., обновл. и дораб. М.: 2000. С.155.

¹¹ Романьков А.И., Червонюк В.И., «Делегированное законодательство и регламентарная власть: проблема утверждения конституционного партнерства во взаимоотношения законодательной и исполнительной ветвей власти», Сборник научных трудов кафедры конституционного и муниципального права: сборник статей, М.: Моск. ун-т МВД России, 2012. С. 65.

¹² Арефина С. И., «Проблемы делегированного законодательства в зарубежных странах (обзор)», Социальные и гуманитарные науки. Отечественная и зарубежная литература. Сер. 4, Государство и право: Реферативный журнал №3, 2002, С. 50.

Պատվիրակված օրենսդրության հասկացությունը ճշգրտելու նպատակով պետք է նշել մի քանի նկատառում:

Նախ՝ «պատվիրակված օրենսդրություն» հասկացության ծավալը կախված է իրավաստեղծ լիազորությունների պատվիրակման եղանակներից: Երբեմն պատվիրակման եղանակներն այնքան են լայնացվում¹³, որ դրա հետևանքով «պատվիրակված օրենսդրություն» հասկացությունում ընդգրկվում են նաև դասական իմաստով ենթաօրենսդրական ակտերը: Օրինակ՝ իրավաստեղծ լիազորության պատվիրակման եղանակ են համարում անուղղակի պատվիրակումը, երբ օրենսդիրն ընդունում է օրենքներ, սակայն այդ օրենքով առանձին հարցերի կարգավորումը (մանրամասների սահմանումը) թողնում է գործադիր իշխանության մարմինների հայեցողությանը: Եթե այս իրավիճակը նույնպես որակենք որպես պատվիրակում (նույնիսկ եթե այն անվանենք անուղղակի պատվիրակում), ապա պատվիրակված օրենսդրության և ենթաօրենսդրական ակտերի տարբերակման սահմանագիծը պարզապես կվերանա:

Եթե օրենսդիրն ընդունում է օրենք, իսկ գործադիր իշխանության մարմիններն այդ օրենքի ընդհանուր կարգավորումները կոնկրետացնելու կամ օրենքի նյութաիրավական նորմերի իրականացման կառուցակարգեր սահմանելու նպատակով ընդունում են նորմատիվ իրավական ակտեր, ապա այս դեպքում խոսքը ոչ թե պատվիրակված օրենսդրության, այլ դասական իմաստով ենթաօրենսդրական ակտերի մասին է. չէ՞ որ գործադիր իշխանության այդ ակտերն ընդունվում են այդ օրենքի հիման վրա և ի կատարումն այդ օրենքի:

Երկրորդ՝ պատվիրակված օրենսդրություն կարելի է համարել միայն այն նորմատիվ իրավական ակտերը, որոնք ընդունվել են օրինաստեղծ լիազորությունների ուղղակի պատվիրակման հիման վրա, այսինքն՝ օրենսդիր մարմինը Սահմանադրությամբ նախատեսված կարգավորման դեպքում ընդունում է հատուկ ակտ, որտեղ նշվում են թե կոնկրետ ո՞ր մարմինը ի՞նչ ժամկետում և ի՞նչ հարցերի վերաբերյալ է իրականացնելու պատվիրակված օրինաստեղծ լիազորությունները:

Օրինաստեղծ լիազորությունների պատվիրակումը չի կարող լինել ընդհանուր (վերացական) կամ առանց պայմանների: Ուղղակի պատվիրակման դեպքում օրենսդիրը իր օրինաստեղծ լիազորությունների մի մասը փոխանցում է գործադիր իշխանության մարմինն որոշակի ժամկետով կամ պայմաններով, օրինակ՝ նշում է պատվիրակված լիազորությունների նպատակը և սահմանները, հարցերի շրջանակը, որոնց վերաբերյալ գործադիր իշխանության մարմինը կարող է ընդունել օրենքի ուժ ունեցող որոշումներ, սկզբունքները և չափանիշները, որոնցով պետք է ղեկավարվի պատվիրակված լիազորություններն իրականացնելիս¹⁴:

¹³ Троицкий В.С., «Делегированное законотворчество: теория и практика: теория и практика», автореф. дисс. ... канд. юрид. наук. М.: 2005. С.10-11.

¹⁴ Троицкий В.С., «Делегированное законотворчество: теория и практика: теория и практика: автореф. дисс. ... канд. юрид. наук». М.: 2005. С. 13.

Երրորդ՝ օրինաստեղծ լիազորությունների պատվիրակման դեպքում օրենսդիրը գործադիր իշխանության մարմնին պատվիրակում է կարգավորել այն հարաբերությունները, որոնք գտնվում են իր իրավասության տիրույթում: Այլ կերպ ասած՝ գործադիր իշխանության մարմինը օրինաստեղծ լիազորությունների ուղղակի պատվիրակման դեպքում հնարավորություն է ստանում կարգավորել այն հարաբերությունները, որոնք սովորական պայմաններում պետք է կարգավորեր օրենսդիր մարմինը: Այդ պատճառով էլ պատվիրակված օրենսդրությունը հաճախ անվանում են օրենքի ուժ ունեցող որոշումներ:

Եթե պատվիրակված օրենսդրությունը համեմատենք օրենքների, ռեգլամենտային ակտերի և ենթաօրենսդրական ակտերի հետ, ապա կատարյալ հետևյալ պատկերը. պատվիրակված օրենսդրությունը նման է օրենքին, քանի որ կարգավորում է այնպիսի հարաբերությունները, որոնք սովորական պայմաններում պետք է կարգավորվեին օրենքով: Պատվիրակված օրենսդրությունը, ըստ էության, գործադիր իշխանության մարմինների կողմից ընդունված օրենքներն է (օրենքի ուժ ունեցող որոշումներ)¹⁵: Պատվիրակված օրենսդրությունը, ինչպես և օրենքները, պարունակում են առաջնային իրավական նորմեր¹⁶: Այնուամենայնիվ, պատվիրակված օրենսդրությունը օրենքներից տարբերվում է նրանով, որ այն ընդունում են գործադիր իշխանության մարմինները: Պատվիրակված օրենսդրությունը չպետք է հակասի պառլամենտի ընդունած օրենքներին:

Պատվիրակված օրենսդրությունն ընդունող սուբյեկտների (գործադիր իշխանություն իրականացնող մարմինների) և ընդունման ընթացակարգի տեսանկյունից նման է ենթաօրենսդրական ակտերին: Տարբերությունն այն է, որ պատվիրակված օրենսդրությունը պարունակում է առաջնային իրավական նորմեր, այսինքն՝ դրանք հիմնված չեն օրենքի վրա և չեն ընդունվել ի կատարումն օրենքի ընդհանուր կարգավորումների: Պատվիրակված օրենսդրության հիմքը օրենսդիր մարմնի օրինաստեղծ լիազորությունների ուղղակի պատվիրակումն է:

Պատվիրակված օրենսդրությունը նման է նաև ռեգլամենտային ակտերին, քանի որ երկուսն էլ, ի տարբերություն դասական իմաստով ենթաօրենսդրական ակտերի, պարունակում են առաջնային իրավական նորմեր: Նրանց տարբերությունը հետևյալում է. ռեգլամենտային ակտերը կարգավորում են այն հարցերը, որոնք օրենսդրի իրավասության մեջ չեն մտնում, մինչդեռ պատվիրակված օրենսդրությամբ կարգավորվում են այնպիսի հարաբերություններ, որոնք գտնվում են բացառապես օրենսդրի իրավասության տիրույթում:

Գործադիր իշխանության մարմինների կողմից նորմատիվ իրավական ակտերի ընդունումն այս կամ այն չափով սահմանափակում է իշխանության բա-

¹⁵ Amit Kumar Judicial review over Delegated Legislation // https://www.academia.edu/34367947/Judicial_review_over_Delegated_Legislation (մուտք 20.03.2023)

¹⁶ Троицкий В.С., «Делегированное законотворчество: теория и практика»: автореф. дис. ... канд. юрид. Наук. М.: 2005. С. 6.

ժամանակակից սկզբունքը, հատկապես՝ պատվիրակված օրենսդրությունը: Այս պատճառաբանությամբ 2005թ. սահմանադրական փոփոխություններով վերացվեց ՀՀ ազգային ժողովի պատվիրակման ակտի հիման վրա ՀՀ կառավարության կողմից օրենքի ուժ ունեցող որոշումներ ընդունելու ինստիտուտը (1995թ. ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածը), իսկ 2015թ. խմբ. Սահմանադրությամբ մի քանի ուղղություններով խստացվեցին ենթաօրենսդրական ակտեր ընդունելու պահանջները: Մինչդեռ իրավահամեմատական հետազոտությունները վկայում են հակառակ միտումի մասին. պատվիրակված օրենսդրությունը կամ պառլամենտի հանձնարարությամբ ընդունված և գործադիր իշխանության՝ օրենքի ուժ ունեցող ակտերը ժամանակակից պետություններում ունեն անի միտում: Դա պայմանավորված է իրավական կարգավորման ենթակա հասարակական հարաբերությունների քանակական և որակական աճով¹⁷:

2.5. Իրավահամեմատական տեսանկյունը

2.5.1. Ռեգլամենտային և պատվիրակված նորմատիվ իրավական ակտերի պրակտիկայի ընդլայնման միտումը: Հեղինակավոր սահմանադրագետները նշում են, որ ոչ վաղ անցյալում գործադիր իշխանության ակտերը, առնվազն դոկտրինալ հարթությունում, դիտվում էին որպես ենթաօրենսդրական ակտեր, այսինքն՝ օրենքի հիման վրա և ի կատարում օրենքի ընդունված ակտեր: Ներկայումս այս մոտեցումն ամբողջությամբ չի արտացոլում առկա իրողությունները: Քանի որ օրենքի կիրառման շրջանակը սահմանափակ է, դրանից դուրս կարգավորումը սկսում է իրականացվել հենց գործադիր իշխանության ակտերով: Մրանք, այսպես ասած, փոխարինում են օրենքին (...)¹⁸:

Մեկ այլ աշխատանքում կարդում ենք.

«Գործադիր իշխանության մարմիններն ունեն անկախ նորմատիվ լիազորություններ, որոնք դուրս են գալիս օրենքի կիրառման գործադիր և վարչական գործունեության սահմաններից: Պառլամենտի կողմից պատվիրակված լիազորությունների հիման վրա, ունենալով ինքնուրույն ռեգլամենտային (регламентарный) լիազորություններ, նախագահը, կառավարությունը և նախարարներն ընդունում են կյանքի կարևոր որոշումները կարգավորող բազմաթիվ նորմատիվ ակտեր: Հաճախ նման ակտերն ունեն ոչ պակաս, այլ ավելի մեծ նշանակություն, քան օրենքը»¹⁹:

Այսպիսով ի տարբերություն ՀՀ-ում գործադիր իշխանության մարմինների, նորմատիվ լիազորությունները յուրաքանչյուր սահմանադրական բարեփո-

¹⁷ Берлявский Л. Г., Данихно С. Н., Классификация источников конституционного права: вопросы теории и практики, Юрлитинформ, М., 2019. С. 325.

¹⁸ Под общ. ред. чл.-корр. РАН, проф. М. В. Баглая, д. ю. н., проф. Ю. И. Лейбо и д. ю. н., проф. Л. М. Энтина Конституционное право зарубежных стран: учебник, Норма, М., 2004. С. 24.

¹⁹ Чиркин В.Е., Конституционное право зарубежных стран, Юристъ, М., 1997. С. 266-267:

խումների ընթացքում քայլ առ քայլ սահմանափակելու հայկական սահմանադրական իրավունքի՝ համեմատական սահմանադրական իրավունքի դոկտրինը փաստում է, որ ենթաօրենսդրական ակտերի հիման վրա իրականացվող կարգավորումը իր տեղը զիջում է ռեզլամենտային ակտերին կամ պատվիրակված օրենսդրությանը:

2.5.2. Ռեզլամենտային ակտերը ռոմանական իրավական համակարգերում: Ռոմանական իրավական համակարգերին պատկանող երկրներում (Ֆրանսիա, Իտալիա, Պորտուգալիա, Լյուքսեմբուրգ, Իսպանիա, Մարոկկո և այլն) նորմատիվ իրավական ակտերի համակարգը բաղկացած է ոչ միայն օրենքներից և ենթաօրենսդրական ակտերից, այլ նաև ռեզլամենտային ակտերից: Ռեզլամենտային ակտերի ընդունման պրակտիկան նախատեսվել է Ֆրանսիայի 1958թ. սահմանադրական բարեփոխումների ժամանակ, երբ Սահմանադրությամբ սահմանվեց հարցերի որոշակի ցանկ, որոնց վերաբերյալ օրենսդրական ակտեր կարող է ընդունել օրենսդիր մարմինը: Մյուս հարցերը, որոնք վերապահված չեն օրենսդրին, կարգավորվում են գործադիր մարմինների ռեզլամենտային ակտերով: Ընդ որում, Ֆրանսիայում կառավարությունը իրավասու է ընդունել ինչպես ռեզլամենտային ակտեր, այնպես էլ դասական իմաստով ենթաօրենսդրական ակտեր, որոնք կոչված են կոնկրետացնելու օրենսդրական ակտերի ընդհանուր դրույթները: Մասնագետները իրավահամեմատական վերլուծության արդյունքում եզրակացնում են, որ ռոմանական իրավական համակարգերում ռեզլամենտային ակտերն ունեն լայն տարածում²⁰:

Ի տարբերություն Ֆրանսիայի՝ Գերմանիայի 1949 թ. Հիմնական օրենքը գործադիր իշխանության մարմինների համար ինքնավար կարգավորումներ սահմանելու հնարավորություն չի նախատեսում, դեկրետ-օրենքների ընդունման պրակտիկան արգելվում է: Գերմանիայում կառավարական և այլ ենթաօրենսդրական ակտերը կարող են ընդունվել միայն օրենքների կատարման շրջանակներում²¹: Գերմանական իրավունքի երկրներում, որպես կանոն, գործադիր իշխանության մարմինների ակտերի ինքնավարությունը բացակայում է²²:

Նկատի ունենալով, որ միայն Սահմանադրությամբ լիազորված մարմինների կողմից նորմատիվ որոշումներ ընդունելու վերաբերյալ (2015 թ. իսբ. ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մաս) «գերմանական մոդելի» մեկնաբանության

²⁰ Волкова С. Н., «Сравнительный анализ системы нормативных актов в странах романо-германской правовой семьи и в странах «Общего права», Вестник Университета имени О. Е. Кутафина, №3 (19), 2016, С. 214-216.

²¹ Саидов А.Х., «Сравнительное правоведение (основные правовые системы современности): учебник», Под ред. В.А. Туманова, Юристъ, М., 2003. С. 172.

²² Волкова С. Н., «Сравнительный анализ системы нормативных актов в странах романо-германской правовой семьи и в странах «Общего права», Вестник Университета имени О. Е. Кутафина, №3 (19), 2016, С. 216.

հիմքում, ամենայն հավանականությամբ, ընկած են գերմանական սահմանադրական իրավունքի ավանդույթները և սահմանադրական մտածողությունը՝ ուստի նրանց մոտեցման խորքերը հասկանալու համար կարևոր է պարզել Գերմանիայի Հիմնական օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորման էությունը:

2.5.3. Պատվիրակված ակտերը գերմանական իրավունքում

(ա) Միայն Հիմնական օրենքով լիազորված մարմինների կողմից որոշումներ ընդունելու կարգավորումը: Գերմանիայի Հիմնական օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է.

«Օրենքը կարող է լիազորել Դաշնային կառավարությանը, Դաշնային նախարարին կամ երկրամասերի կառավարություններին ընդունելու՝ իրավական որոշումներ: Ընդ որում, օրենքով պետք է սահմանվեն տրված լիազորությունների բովանդակությունը, նպատակը և ծավալը: Որոշման մեջ պետք է նշվի դրա իրավական հիմքը: Եթե օրենքը նախատեսում է լիազորությունների հետագա փոխանցում, սպա լիազորությունների փոխանցման համար պահանջվում է իրավական որոշում»²³:

Ինչպես նկատում ենք, Գերմանիայի Հիմնական օրենքով է սահմանված, թե օրենսդիրը գործադիր իշխանության ո՞ր մարմիններին կարող է փոխանցել իրավական որոշում կայացնելու լիազորությունը, այսինքն՝ օրենսդիրը Դաշնային կառավարությունից, Դաշնային նախարարներից կամ երկրամասերի կառավարություններից բացի, այլ մարմինների, եթե նույնիսկ դրանք սահմանադրական մարմիններ են, չի կարող տրամադրել իրավական որոշումներ ընդունելու լիազորություն (բացառությամբ ենթապատվիրակման դեպքի, որի մասին կխոսվի հաջորդիվ): Թեև առանձին մասնագետներ փաստում են, որ «Գերմանիայում կառավարական և այլ ենթաօրենսդրական ակտերը միայն օրենքների կատարման շրջանակներում ընդունելու կանոնից առկա են բացառություններ»²⁴, սակայն, ցավոք նրանք չեն նշում այն դեպքերը (բացառություններ), երբ գործադիր իշխանության մարմինները գործնականում ընդունում են ռեզլամենտային (օրենքներից ինքնավար) ակտեր: Բացի այդ, Ռ. Դավիդը նշում է, որ Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանը սանկցավորել է լայն տարածում ստացած այն օրենսդրությունը, որով կառավարման մարմիններն օժտվում են նորմաստեղծ լայն լիազորություններով²⁵:

Միայն Հիմնական օրենքով լիազորված մարմինների կողմից իրավական որոշումներ ընդունելու կարգավորումը վերլուծելիս պետք է նկատի ունենալ երկու հանգամանք:

²³ Сост. Дубровин В.Н., «Конституции зарубежных стран», Юрлитинформ, М., 2001. С. 151.
²⁴ Саидов А.Х., «Сравнительное правоведение (основные правовые системы современности): учебник», под ред. В.А. Туманова, Юрист, М., 2003. С. 172.
²⁵ Рене Давид, Камилла Жоффре-Спинози, «Основные правовые системы современности», пер. с фр., Международные отношения, М., 1999, С. 84.

Նախ՝ Գերմանիայի իրավական համակարգում «օրենք» (Gesetz) հասկացությունը, ի տարբերություն Հայաստանի²⁶, ընկալվում է ձևական և նյութական իմաստներով: Այս տեսանկյունից, օրենք են ոչ միայն պառլամենտի ընդունած նորմատիվ իրավական ակտերը (ձևական իմաստով օրենք), այլև գործադիր իշխանության մարմինների ընդունած (նրան պատվիրակված) ակտերը (նյութական իմաստով օրենք): Այն փաստը, որ Գերմանիայում իրավական որոշումները կարող են ընդունել միայն Սահմանադրությամբ լիազորված մարմինները, մի գուցե պայմանավորված է այն հանգամանքով, որ բոլոր այդ ակտերը գերմանական դոկտրինը համարում է օրենք: Պատահական չէ, որ տեսության մեջ նշվում է.

«Բոլոր այն ակտերը, որոնք անվանվում են «օրենք», պետք է բխեն սահմանադրորեն ճանաչված օրենսդիր մարմիններից կամ էլ ընդունվեն խիստ կանոնակարգված, այն դեպքերում, երբ խոսքը պատվիրակված օրենսդրության մասին է»²⁷:

Երկրորդ՝ Գերմանիայի Հիմնական օրենքով նախատեսված է նշված երեք գործադիր իշխանության մարմինների իրավաստեղծ լիազորությունների **ենթա(վերա) ապատվիրակման** (Sub-delegate²⁸) հնարավորություն, այսինքն՝ օրենքը կարող է նախատեսել Դաշնային կառավարությանը, Դաշնային նախարարին կամ երկրամասերի կառավարություններին պատվիրակված լիազորությունների հետագա փոխանցում այլ մարմիններին: Գերմանական սահմանա-

